ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1950 *Общественные науки*

Վ. Մելիքսետյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(1926--1929 թ. թ.)

ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄ, ԳՅՈՒՂԿՈՄՊԵՐԱՑԻԱՆ ԵՎ ԿՈԼԽՈԶ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, Սովետական Միության բանվորների և գյուղացիների ստեղծագործական աշխատանքի շնորհիվ, արագ թափով առաջ ընթացավ մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնումը և կուլտուրական շինարարությունը։

1925—26 տնտեսական տարում ավարտվում էր ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Սովետական Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնումը ևս ընթացավ արագորեն։ 1925—26 տնտեսական տարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության արտադրանքը մոտենում էր 1913 թվականի մակարդակին։

Սովետական երկրին չէր կարող բավարարել նախապատերազմյան ժամանակաշրջանի մակարդակը։ Վերականգնման շրջանում ձեռք բերված հաջողություններն անբավարար էին կառուցվող սոցիալիզմի երկրի համար, որովհետև նախապատերազմյան մակարդակը «հետամնաց երկրի մակարդակն էր»։[1]

Սովետական երկրի առաջ ամբողջ ուժով ծառացան մեր երկրի հետագա զարգացման, սոցիալիստական ինդուստրացման խնդիրները։ Ինդուստրացման հարցերը թելադրվում էին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պայմաններով։ Անհնարին էր պաշտպանել մեր երկրի անկախությունն ու ազատությունն առանց արդյունաբերության հզոր բազայի։

Ընկեր Ստալինը ասում է. «Մենք հասանք և անցանք կապիտալիստական առաջավոր երկրներից բաղաքական տեսակետից, կառուցելով պրոլետարիատի դիկտատուրա։ Բայց այդ քիչ է։ Մենք պետք է օգտագործենք պրոլետարիատի դիկտատուրան, մեր սոցիալիզացված արդյունաբերությունը, տրանսպորտը, վարկային սիստեմը և այլն... որպեսզի հասնենք և անցնենք կապիտալիստական առաջավոր երկրներից նաև տնտեսապես»։[2]

Մեր երկրի տեխնիկական և տնտեսական հետամնացությունը հաղթահարելու գործում վճռականը ժամանակակից սոցիալիստական հզոր ինդուստրիայի, մանավանդ մեքենաշինական ինդուստրիայի զարգացումն է։ «... Ին-

[1] *Համկ(բ)Պարտիայի Պատմություն, համառոտ դասընթաց, 1947 թ., Երևան, էջ 373։*
[2] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 11, էջ 286։*

դուստրացումը,— ասում էր ընկեր Ստալինը,— մեր երկրի տնտեսական ինքնուրույնությունը պահպանելու հիմնական միջոցն է, որ առանց ինդուստրացման մեր երկիրը ենթակա է համաշխարհային կապիտալիստական սիստեմի կցորդը դառնալու ռիսկին»։[1] Իսկ երկրի պաշտպանության տեսակետից. «Անհնարին է պաշտպանել մեր երկրի անկախությունը՝ արդյունաբերական բավարար բազա չունենալով պաշտպանության համար։ Անհնարին է ստեղծել նման արդյունաբերական բազա՝ չունենալով արդյունաբերության մեջ բարձրագույն տեխնիկա»։[2]

Լենինի գործի մեծ շարունակող ընկեր Ստալինը մշակեց մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման հարցերը, որ արմատապես տարբերվում էր կապիտալիստականից։ Կապիտալիստական երկրների համար ինդուստրիայի աղբյուր են ծառայել հարյուրավոր տարիների ընթացքում գաղութները կողոպտելը, պատերազմական կոնտրիբուցիաները, իսկ ցարական Ռուսաստանի համար՝ այդ բոլորին զուգընթաց, օտարերկրյա կապիտալիստական երկրներից վերցրած ստրկական փոխառությունները։

Կապիտալիստական երկրները ինդուստրացման կուտակումներ ձեռք բերելու համար սկսում էին թեթև արդյունաբերությունից. «սակայն դա երկարատև պրոցես է, որը պահանջում է մի քանի տասնամյակի մեծ ժամկետ»։[3]

Ընկեր Ստալինը մատնանշում էր, որ ՍՍՌՄ-ի ինդուստրացումը պետք է սկսել ծանր արդյունաբերությունից և նրա սիրտը հանդիսացող մեքենաշինությունից։

«Պարտիան հիշում էր Լենինի խոսքերը, որ առանց ծանր ինդուստրիայի անհնարին է պաշտպանել երկրի անկախությունը, որ առանց նրան սովետական կարգերը կարող են կործանվել։ Դրա համար էլ մեր երկրի կոմունիստական պարտիան մերժեց ինդուստրացման «սովորական» ուղին և երկրի ինդուստրացման գործն սկսեց ծանր ինդուստրիայի ծավալումից։ Դա շատ դժվար, բայց հաղթահարելի էր»։[4]

Ընկեր Ստալինը ամբողջ սրությամբ դրեց սոցիալիստական ինդուստրացման աղբյուրների հարցը, բացահայտելով կապիտալիստական և սոցիալիստական աղբյուրների սկզբունքային տարբերությունը, ցույց տալով, որ սովետական պետությանը, նրա հենց բնույթից ելնելով, խորթ են կապիտալիստական ինդուստրացման մեթոդները։ Սովետական պետության համար միայն մեկ ճանապարհ կար՝ սոցիալիստական կուտակման ճանապարհը։ Սոցիալիստական ինդուստրացման կուտակման համար կարևոր աղբյուր են հանդիսանում նաև պետական և կոոպերատիվ առևտրից ստացված եկամուտները, մասսայական փոխառությունները, բանկերը, պետական և հասարակական միջոցները։

Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ուներ աշխատանքի արտադրողականության բարձրացումը,

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 7, էջ 261։

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 11, էջ 283։

3 Ընկեր Ստալինի ճառը Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1946 թվի փետրվարի 9-ին, Երևան, 1946 թիվ, էջ 16։

4 Նույն տեղում։

աշխատանքային կոմունիստական մեթոդը՝ սոցիալիստական մրցությունը, պայքարը աշխատանքային խիստ կարգապահության համար։[1]

Համկ(բ)Պ-ի 14-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1925 թ. դեկտեմբերին, հավանություն տվեց ստալինյան ինդուստրացման պլանին. «14-րդ համագումարից հետո պարտիան պայքար ծավալեց Երկրի սոցիալիստական ինդուստրացման վերաբերյալ Սովետական իշխանության գլխավոր դիրքավորումը կենսագործելու համար»։[2]

Այդ շրջանի բնորոշ գիծը, նշում էր ընկեր Ստալինը, պայքարի բարդացումն էր, մի կողմից կապիտալիստական պետությունների ու մեր երկրի միջև, մյուս կողմից մեր երկրի ներսում սոցիալիստական ուժերի ու կապիտալիստական տարրերի միջև։ Հանձին Սովետական Միության հզորացման, կապիտալիստական երկրները սպառնալիք էին տեսնում կապիտալիստական սիստեմի գոյության համար։ Այդ պատճառով իմպերիալիստական կառավարությունները ձեռք էին առնում բոլոր միջոցները, որպեսզի ՍՍՌՄ-ի վրա նոր ճնշում գործադրեն, շփոթություն մտցնեն, վիժեցնեն, կամ գոնե արգելակեն ՍՍՌՄ-ի ինդուստրացման գործը։[3]

Միջազգային ռեակցիայի ուժերը նորից ձեռնամուխ եղան հակասովետական միասնական ճակատի կազմակերպմանը։ ՍՍՌՄ թշնամիների գլուխ էին անցել անգլիական պահպանողականները, որոնք գլխավորում էին Սովետական Միության դեմ նոր պատերազմի նախաձեռնությունը։ 1927 թվին բանդիտական հարձակումներ տեղի ունեցան արտասահմանի սովետական հիմնարկների վրա. պրովոկացիոն հարձակում կատարվեց Պեկինի սովետական լիազոր-ներկայացուցչության վրա, հարձակում Արկոսի վրա Լոնդոնում։ Սովետական Միության դեսպան Վոյկովի սպանությունը Վարշավայում, Անգլիայի կողմից դիվանագիտական հարաբերությունների խզումը Սովետական Միության հետ։

Կոնտրռևոլուցիոն պայքարը շարունակում էին ուժեղացնել նաև Անդրկովկասից քշված ժողովրդի ամենաոխերիմ թշնամիները. իմպերիալիստական պետությունների ամենաակտիվ գործակալները, դաշնակցականները, վրաց մենշևիկները, մուսավաթականները և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաները։ Նրանք արտասահմանում կազմել էին, այսպես կոչված, «Կովկասյան փրկության կոմիտե», որը ծառայության մեջ էր գտնվում իմպերիալիստական պետությունների հետախուզություններում։

Ընկեր Ստալինը 1927 թվին «Պրավդա»-յում տպագրված իր «Նոթեր ժամանակակից թեմաների շուրջը» նշանավոր հոդվածում հանգամանորեն վերլուծելով այդ շրջանի միջազգային բարդ իրադրությունը, նշում էր. «Ամբողջ այժմյան միջազգային իրադրությունը, անգլիական կառավարության ՍՍՌՄ-ի դեմ ուղղված «օպերացիաների» վերաբերյալ բոլոր փաստերը, և՛ այն, որ նա ՍՍՌՄ-ի դեմ ֆինանսական բլոկադա է կազմակերպում, և՛ այն, որ նա գաղտնի զրույցներ է ունենում տերությունների հետ՝ ՍՍՌՄ-ի դեմ ուղղված քաղաքականության մասին, և՛ այն, որ նա սուբսիդիա է տալիս Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և էմիգրանտական այլ

---

1 Համկ(բ)Պարտիայի Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 386—387։
2 Նույն տեղում, էջ 384։
3 Նույն տեղում, էջ 380։

«կառավարություններին» և այլն ՍՍՌՄ-ի այդ երկրներում ապստամբություն կազմակերպելու համար...»։[1]

Այդ նույն ժամանակներում նաև դաշնակ բանդիտներն ամեն կերպ փորձում էին կապ ստեղծել մեր երկրի ներսում թաքնված կոնտրռևոլուտիոն տարրերի հետ, որպեսզի դիվերսիաներ, տեռորիստական ակտեր կատարեին, ապրստամբություն բարձրացնեին մեր երկրում։ Սովետական հզոր պետությունը մերկացնում ու հողմացրիվ էր անում ժողովրդի թշնամիներին։

Միջազգային լարված իրադրության պայմաններում տրոցկիստներն ու մյուս օպոզիցիոներները քիչ դժվարություններ չպատճառեցին պարտիային և սովետական պետությանը։ Նրանք կատաղի պայքար էին մղում բոլշևիկյան պարտիայի գծի դեմ։ Տրոցկիստա-զինովևական օպոզիցիան պահանջում էր ապրանքների գների բարձրացում, գյուղատնտեսական հարկի բարձրացում։ Հայաստանի բոլշևիկները՝ զինվելով Համկ(բ) Պարտիայի 14-րդ համագումարի, 15-րդ պարտ. կոնֆերենցիայի (1926 թ. հոկտեմբեր), Համկ(բ)Պ 1927 թվի հուլիսյան պլենումի պատմական որոշումներով, ընկեր Ստալինի ցուցումներով, է՛լ ավելի սրեցին պայքարը տրոցկիստական օպոզիցիայի դեմ, սերտորեն համախմբվեցին Լենինի-Ստալինի պարտիայի շուրջը, մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։

Տրոցկիստական բանդան իրեն նպատակ էր դրել քայքայել սովետական պետության հզորությունը, վիժեցնել մեր առաջընթացը։

«Մեր երկրի դեմ ստեղծվել է մի ինչ որ միասնական ճակատի նման մի բան Չեմբեռլենից մինչև Տրոցկին»,[2]— ասում է ընկեր Ստալինը։

Այդպիսով, Կոմունիստական պարտիան, զինված մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության լենինյան-ստալինյան ուսմունքով, ՄՍՌՄ ժողովուրդներին մոբիլիզացրեց՝ կենսագործելու 14-րդ համագումարի պատմական որոշումները սոցիալիստական ինդուստրացման մասին և մեր երկիրը տարավ դեպի սոցիալիզմ, խորտակելով դասակարգային թշնամիների՝ տրոցկիստական-զինովևական գործակալության կատաղի դիմադրությունը։

* * *

Սոցիալիստական ինդուստրիայի զարգացումը մեծ ծավալով առաջ էր գնում ՍՍՌՄ-ում։

Կառուցվում էին նորանոր գոմենյան հնոցներ, հիդրոէլեկտրակայաններ, բացվում էին նոր ածխահորեր, ընդարձակվում էր նավթարդյունաբերությունը։ Հիմք դրվեց մեքենաշինական, ավտոմոբիլային, տրակտորային գործարանների, կառուցվում էին երկաթուղային նոր մագիստրալներ։

Սոցիալիստական ինդուստրացումը մեծ չափով առաջ էր գնում նաև ազգային ռեսպուբլիկաներում, Սովետական Միության բոլոր մարզերում ու օկրուգներում։

Պարտիայի 14-րդ համագումարի որոշումների հիման վրա, զարգացման տարբեր մակարդակի վրա կանգնած ազգային ռեսպուբլիկաները, Միութենական միասնական ընտանիքում ձեռնամուխ եղան արդյունաբերության զարգացմանը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Հայաստանի աշխատա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 9, էջ 364։

վորությունը ստեղծագործական նոր եռանդով լծվեց սոցիալիստական ինդուստրիայի զարգացմանը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կատարված ներդրումների գումարը միայն 1925—26 տնտեսական տարում կազմեց մոտ 11 միլիոն ռուբլի, որը երկու և կես անգամ ավելի էր նախորդ յուրաքանչյուր տարվա ներդրած գումարից։ Հաջորդ՝ 1926—27 տարում ներդրումները կազմեցին 18,7 միլիոն ռուբլի, 1927—28 թ. թ՝ 24,6 միլիոն ռուբլի։[1]

Եթե 1921—1925 թ. թ. ներդրումների զգալի մասը՝ ավելի քան 40 տոկոսը, հատկացվում էր գյուղատնտեսությանը, իսկ արդյունաբերության և էներգետիկ տնտեսության մեջ ներդրումների գումարը շատ ավելի պակաս էր գյուղատնտեսության մեջ ներդրված գումարից, ապա ինդուստրացման ժամանակաշրջանի առաջին տարիներին ներդրումների հարաբերությունը փոխվեց հօգուտ սոցիալիստական արդյունաբերության։ Որպես օրինակ կարելի է վերցնել ինդուստրացման ժամանակաշրջանի առաջին տարին՝ 1925—26 թվը։ Ինչպես նշեցինք, այդ տարում ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել էր մոտ 11 միլիոն ռուբլի։ Այդ գումարի 60 տոկոսը հատկացվեց խոշոր արդյունաբերության զարգացմանը։ Հաջորդ տարիներին ավելի է մեծանում արդյունաբերության մեջ կատարված ներդրումների գումարը, առանձնապես էներգետիկ, քիմիական, լեռնահանքային, շինանյութերի արդյունաբերության, տեքստիլ, մետաղամշակման և այլ ճյուղերի համար կատարվող հատկացումները։ Արդյունաբերական այս ճյուղերից մեծ մասը նոր էր հիմնադրվում Հայաստանում։

Սովետական իշխանության հենց առաջին տարիներից Լենինը և Ստալինը առանձնակի ուշադրություն էին դարձնում հզոր էներգետիկ բազա ստեղծելու հարցի վրա։

Վերականգնման շրջանի տարիներին Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները, կենսագործելով Լենինի և Ստալինի նշանավոր ցուցումները, զգալի քայլեր կատարեցին Հայաստանում էներգետիկ բազա ունենալու խնդրում։ Այդ շրջանում արդեն Հայաստանում էլեկտրաէներգիայի կարողությունը մի քանի անգամ գերազանցել էր նախապատերազմյան մակարդակը, բայց այդ բնավ չէր բավարարում բուռն թափով աճող արդյունաբերության կարիքները, ժողովրդի կուլտ-կենցաղային պահանջները։

Պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի աշխատավորությունը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի զարգացմանը։

Արդյունաբերական նշանակություն ունեցող էլեկտրակայաններից առաջինը Երևանի հիդրոէլեկտրակայանն էր, որը կառուցվում էր նշանավոր ճարտարապետ Ալ. Թամանյանի նախագծով։ Էլեկտրակայանի կառուցման աշխատանքները սկսվեցին 1924 թվին և նրա առաջին հերթը շահագործման հանձնվեց 1926 թվին։ Այդ հանդիսացավ Հայաստանի աշխատավորության խոշոր հաղթանակներից մեկը՝ սոցիալիստական արդյունաբերության բնագավառում։

1926 թվի մայիսի 16-ին, Երևանի մոտ Հրազդան գետի ձախ ափին, նոր հիդրոկայանի վայրն էին հավաքվել մայրաքաղաքի և նրա շրջակա գյուղերի

[1] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940), изд. УНХУ. Ереван, 1940 г., стр. 19.

հազարավոր աշխատավորներ։ Հիդրոկայանի բացմանը ներկա էին Անդրֆեդերացիայի կառավարության ներկայացուցիչները, հայ ժողովրդի բարեկամ, մեծ Ստալինի մարտական զինակից Սերգո Օրջոնիկիձեն։ Հակիրճ ու խանդավառ էր նրա ողջույնի խոսքը. «Երևանի հիդրոկայանի կառուցումով Հայաստանի աշխատավորությունը քայլ է անում դեպի Հայաստանի էլեկտրիֆիկացիայի գործը։ Նա դրանով իրագործում է մեծ Լենինի խոշոր ավանդներից մեկը «Սովետական իշխանություն, պլյուս էլեկտրիֆիկացիա, հավասար է կոմունիզմի»։ Ընդունեցեք իմ ջերմ ողջույնները այսօրվա ձեր հաղթանակի առթիվ...»։[1]

Երևանի առաջին հիդրոկայանի շինարարությանը զուգընթաց սկսվեց Օրջոնիկիձեի անվան Լենինականի հիդրոկայանի կառուցումը։ Լենինականի գավառի աշխատավորության եռանդուն աշխատանքի շնորհիվ, 1928 թվի նոյեմբերին Հայաստանում սովետական կարգերի հաստատման 8-րդ տարեդարձին, շահագործման հանձնվեց այդ կայանը, որն իր ժամանակին նշանակալի չափով օգնեց Լենինականի և նրա գավառի արդյունաբերական-տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացմանը։

1927 թվականին հիմք դրվեց Հայաստանի այն ժամանակվա հիդրոկայաններից ամենահզորին՝ Զորագէսի շինարարությանը։ Կայանի հիմնադրման հանդեսին ներկա էր ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։ Մեծ ոգևորությամբ ու շինարարական ուժեղ թափով սկսվեց Զորագէսի հիդրոկայանի կառուցումը։ Կայանի հիմնադրման առթիվ, բոլշևիկյան պարտիայի անձնվեր մարտիկ, պետական խոշոր գործիչ Վալերի Կույբիշևը իր ողջույնի հեռագրում ասում էր. «Ողջունում եմ Զորագէսի հիդրոկայանի աշխատանքների հիմնադրումը։ Հիդրոկայանը խոշոր դեր պիտի խաղա Հայաստանի տնտեսության վերելքի ասպարեզում։ Իմ ցանկությունն է, որ լավ, արագ և էժան կառուցվի հիդրոկայանը»։[2]

Սովետական Հայաստանում էլեկտրաշինարարության մեջ կապիտալ ներդրումներն ահռում էին չափազանց արագ։

1928 թվականին արտադրված էներգիայի քանակը չորս անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, իսկ մի շնչին հասնող էլեկտրաէներգիայի քանակը կազմեց 326 տոկոս։ Բնակչության կուլտ-կենցաղային կարիքների համար սպառված էներգիայի քանակը երեք և կես անգամ ավելին էր նախապատերազմյանի համեմատությամբ։[3]

Էներգետիկ բազայի հիման վրա Սովետական Հայաստանում բուռն թափով զարգանում էր խոշոր արդյունաբերությունը։

Վերականգնման շրջանի տարիներին միայն առաջին քայլն էր կատարված պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ։ ՍՍՌՄ արդյունաբերության և պաշտպանության զարգացմանն օգնելու համար, անհրաժեշտ էր ոչ միայն ամբողջապես վերականգնել Հայաստանի պղնձարդյունաբերությունը, այլև պայմաններ ստեղծել նրա հետագա զարգացման համար։ Անդրերկոմը, անձամբ Ս. Կ. Օրջոնիկիձեն հատուկ ուշադրություն են դարձնում Հայաստանի պղնձարդյունաբերության զարգացման վրա։ 1926 թվականին, բացի պլանային կարգով հատկացրած ներդրումներից, պղնձարդյու-

[1] «Խորհրդային Հայաստան», 18 մայիսի, 1926 թիվ, Երևան։
[2] «Խորհրդային Հայաստան», 17 հուլիսի, 1927 թ.։
[3] Соц. строительство Арм. ССР, стр. 19.

նաբերության մեջ լրացուցիչ կարգով ներդրվեցին մեծ գումարներ։ 1926—28 տարում ներդրվեց մոտ 3 միլիոն ռուբլի։

1927 թվականին զգալի չափով ընդարձակվեց շինանյութերի արդյունաբերությունը։ Այդ արդյունաբերության համար բազա դարձան Արթիկ տուֆը, Անի պեմզան, Դավալուի կրաքարը, մարմարը և այլ շինանյութեր։ 1928 թվականին սկսվեց Արթիկ տուֆի հանքերի մշակումը։ Սովետական կառավարությունը խոշոր միջոցներ հատկացրեց տուֆի արդյունաբերությունն ընդարձակելու համար։

ՍՍՌՄ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի առաջադրանքով Միության հաղորդակցության ճանապարհների ժողկոմատը 1928 թվին սկսեց Լենինական—Արթիկ, ապա Մահմուդջուղերկաթգծի կառուցումը, որն ավարտվեց շատ կարճ ժամկետում և հնարավորություն ստեղծեց ընդլայնելու Արթիկ տուֆի հանքամշակումն ու քարի արտահանումը։

Արթիկի տուֆը լայնորեն օգտագործվում էր ռեսպուբլիկայի շինարարության կարիքների համար։ Մեծ քանակությամբ տուֆ էր ուղարկվում Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների շինարարություններին։ Հսկա Դնեպրոգէսի և բազմաթիվ օժանդակ շենքերի կառուցման համար օգտագործվել է Արթիկ տուֆը։

Պեմզայի հանքերի մշակումը մեծ չափով ընդարձակվեց 1928—29 թվականներին, երբ կառուցվեց և շահագործման հանձնվեց Անի կայարանից պեմզայի հանքերը տանող երկաթգիծը։ 1926—27 և 1927—28 թ. թ. արդյունահանվել է ավելի քան 8400 տոննա պեմզա։[1] Երկաթգծի շահագործումից հետո պեմզայի արդյունահանությունը և արտահանումը կրկնապատկվեց։[2]

Կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի մարմարի հարուստ հանքերի մշակումը։ 1928 թվականին շահագործման հանձնվեց մարմարի մշակման առաջին գործարանը Երևանում, որը հետագայում ընդարձակվեց։ Դավալուի բարձրորակ կրաքարի բազայի վրա նախագծվում էր ցեմենտի գործարանի կառուցումը։ 1928 թվականին շահագործման հանձնվեց Ջաջուռի կրի գործարանը։

Այդ նույն թվականին գործարկվեցին Երևանի և Լենինականի մեխանիկական գործարանները, որոնք հանդիսացան ռեսպուբլիկայի արդյունաբերության առաջին նորակառույցները։ Մեխանիկական գործարաններն ունեին չուգունի և պղնձի ձուլման, ատաղձագործական, կաթսայի և էլեկտրազոդման ցեխեր։ Այդ գործարանները, բացի այն, որ արտադրում էին գյուղատնտեսական գործիքներ, տրակտորի որոշ մասեր, մանվածքային և գործվածքային մեքենաների պահեստի մասեր, արտադրում էին նաև ճանապարհաշինարարության պարզ ձևի մեքենաներ, հարթիչ մեքենայի թափանիվներ և այլն։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ մեր մատնանշած ժամանակաշրջանում որոշակի տեղ էր գրավում թեթև արդյունաբերությունը և նրա հիմնական ճյուղը՝ տեքստիլ արդյունաբերությունը։

ՍՍՌՄ ինդուստրացման բազայի վրա Հայաստանում ընդարձակվում էր նաև տեքստիլ արդյունաբերությունը, որն այն ժամանակ գերազանցապես կենտրոնացված էր Լենինականում։ 1924—1928 թ. թ. Լենինականի տեքստիլ

[1] «Հ. Ս. Ս. Հ. աշխատանքը և արդյունաբերությունը 1926—27, 1928—29 թ. թ.»։ Աշխատանքի վիճակագրական բյուրո, Երևան, 1930 թ., էջ 203։

[2] Նույն տեղում։

արդյունաբերության մեջ ներդրվել էր ավելի քան 5 միլիոն ռուբլի։ 1927—28 տնտեսական տարում մանարան գործարանն արտադրեց 400 տոննա մանվածք, իսկ գործվածքայինը՝ ավելի քան 2,2 միլիոն մետր կտավ։[1] Թեթև արդյունաբերության ճյուղերից ընդարձակվեց նաև տրիկոտաժի և մետաքսի արդյունաբերությունը։ Լենինականի տրիկոտաժ գործարանը սարքավորվեց Լենինգրադից ստացված նոր տիպի մեքենաներով։ 1928 թվականին շահագործման հանձնվեց Երևանի Մետաքսի գործարանը։

Զգալի քայլեր արվեցին սննդ-համի արդյունաբերության զարգացման բնագավառում։ Հատուկ տեղ էր գրավում սպիրտի, կոնյակի և գինու արտադրությունը, որն այդ ժամանակ արդեն համարյա ամբողջապես կենտրոնացված էր «Արարատ» տրեստի սիստեմում։ 1926—27 տնտեսական տարում «Արարատ» տրեստի արտադրանքը գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։ Ընդարձակվեցին կոնյակի և գինու արդյունաբերական հին ձեռնարկությունները, իսկ Արտաշատում, Աշտարակում և Հոկտեմբերյանում կառուցվում էին նոր գործարաններ։

1928 թվականին շահագործման հանձնվեց Երևանի Ծխախոտի նոր գործարանը։ Նույն տարում գործարանն արտադրեց 40,8 միլիոն գլանակ, որը 6 անգամ ավելի էր 1922 թվի արտադրանքից։[2] 1926 թվականին շահագործման հանձնվեցին Երևանի և Հոկտեմբերյանի բամբակազտիչ նոր գործարանները։

1926 թվականին գործարկվեց նաև Ջեթ-Օճառ կոմբինատը, որն իր արտադրողականությամբ այն ժամանակ զիջում էր միայն Լենինականի տեքստիլ կոմբինատին։

Հիմք դրվեց արդյունաբերության մի նոր ճյուղի՝ կոնսերվի արդյունաբերությանը։ 1928 թվին Կոնսերվի գործարանն արտադրեց 1,2 միլիոն պայմանական տուփ զանազան տեսակի կոնսերվներ։[3] 1927—28 տարում սննդարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին մեկ միլիոն ռուբլի։[4]

Էժան էլեկտրաէներգիայի բազայի վրա 1926—1928 թ. թ. նախնական քայլեր արվեցին քիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում։

1927 թվականին շահագործման հանձնվեց Երևանի առաջին կարբիտի գործարանը։

Այսպիսով, 1925—26 թ. թ. տնտեսական տարվա համեմատությամբ 1926—27 տարում Սովետական Հայաստանի պետական արդյունաբերության աճը կազմեց 128,3 տոկոս։[5] Սոցիալիստական արդյունաբերության զարգացման այսպիսի մեծ աճ Հայաստանի համար հնարավոր էր միայն Սովետական Միության միասնական ընտանիքում։ Արդյունաբերության, առանձնապես խոշոր արդյունաբերության, արագ զարգացումը ՍՍՌՄ բոլոր ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում, արդյունք էր Լենինի—

[1] Соц. строительство Арм. ССР, стр. 38.
[2] «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935 թ., էջ 4։
[3] Նույն տեղում։
[4] Соц. строительство Арм. ССР, стр. 20.
[5] «Աշխատանքը և արդյունաբերությունը Հայաստանում», էջ 221։

Ստալինի ազգային իմաստուն քաղաքականության հետևողական կենսագործման։

Սոցիալիստական ինդուստրիայի առաջին տարվա հաջողություններն ակներև դարձան ամբողջ ՍՍՌՄ-ում։ 1927 թվին 1926 թվի համեմատությամբ Միության խոշոր արդյունաբերության աճը կազմեց 18 տոկոս։[1]

1927 թվի նոյեմբերին, ընկեր Ստալինը ընդգծում էր. «Սոցիալիզմի անկասկածելի հաջողությունները ՍՍՌՄ-ում շինարարության ճակատում ակնառու կերպով ցույց տվին, որ պրոլետարիատը կարող է հաջողությամբ կառավարել երկիրը առանց բուրժուազիայի, և ընդդեմ բուրժուազիայի, որ նա կարող է հաջողությամբ կառուցել արդյունաբերությունը առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, որ նա կարող է հաջողությամբ ղեկավարել ամբողջ ժողովրդական տնտեսությունը առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, որ նա կարող է հաջողությամբ սոցիալիզմ կառուցել, չնայած կապիտալիստական շրջապատմանը»։[2]

* *

Սոցիալիստական ինդուստրացման հաջողությունները մեծ դեր խաղացին մեր երկրի գյուղատնտեսության զարգացումը սոցիալիստական ուղիով առաջ մղելու գործում։

Պարտիայի 14-րդ համագումարում, ընկեր Ստալինը, խոսելով մեր պարտիայի հերթական խնդիրների մասին՝ գյուղում կատարվելիք աշխատանքի կապակցությամբ, նշում էր. գյուղատնտեսության բնագավառում պետք է աշխատանք կատարել՝

«... դ) հողի բերքատվությունը բարձրացնելու, հողագործության տեխնիկական մակարդակը բարձրացնելու, տեխնիկական կուլտուրաները զարգացնելու, գյուղատնտեսությունն ինդուստրացնելու գծով։

ե) գյուղացիության մասսայական կոոպերացման և նրա կուլտուրական մակարդակի բարձրացման միջոցով, գյուղացիական փոշիացած տնտեսությունները սոցիալիստական շինարարության մեջ մտցնելու գծով»։[3]

Մեր երկրի միլիոնավոր գյուղացիներ բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան կենսագործելու լենինյան-ստալինյան կոոպերատիվ պլանը։ Դրամական վարկեր, գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ էին տրվում աշխատավոր գյուղացիությանը՝ հողի ռացիոնալ մշակման, հողագործության տեխնիկական մակարդակի և բերքատվության բարձրացման համար։

Գյուղատնտեսության զարգացումն արդյունաբերության զարգացմանը զուգակցելու և նրան ենթարկելու գործում կարևոր դեր էր կատարում արդյունահանող, վաճառահանող կոոպերացիան։

«Այժմ խնդիրն այն է,— ասում էր ընկեր Ստալինը,— որ գյուղացիության միլիոնավոր մասսաներին կոոպերացիայի մեջ ներգրավենք և կոոպերատիվային հասարակայնություն պատվաստենք գյուղում։ Որովհետև կոոպերացիան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում և իր տիպով սո-

[1] Համկ(բ) Պարտիայի Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 393։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 10, էջ 274։
[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 374։

ցիալիստական արդյունաբերության առկայությամբ հիմնական կեռիկն է գյուղացիությանը սոցիալիստական շինարարության սիստեմի մեջ մտցնելու համար»։[1] Սովետական Հայաստանում արդյունահանող և վաճառահանող կոոպերացիայի զարգացումը լայն ծավալ ստացավ 1926—1928 թվականներին։ 1926 թվականին գյուղ-կոոպերացիայի մեջ էին ընդգրկված 30.566 գյուղական տնտեսություն, գյուղ վարկային ընկերությունների անդամ էին 18.000 գյուղացիական տնտեսություն։ 1926 թվականի համեմատությամբ, 1928 թվականին կրկնապատկվեց կոոպերացման ենթարկված գյուղական տնտեսությունների քանակը։[2] Առանձին գավառներում կոոպերացիայի մեջ էին ընդգրկված տնտեսությունների ճնշող մեծամասնությունը։ 1928 թվականին Մեղրի գավառում գյուղացիական տնտեսությունների 90 տոկոսը կոոպերացման էր ենթարկված, Երևանի գավառում՝ 52,7 տոկոս, Դիլիջանի՝ 40 տոկոսը, Էջմիածնի՝ 51,7 տոկոսը, Լոռի-Փամբակի՝ 40 տոկոսը։[3]

Գյուղատնտեսական կոոպերացիան մինչև 1927 թվականը ամբողջապես կենտրոնացված էր Հայգյուղկոոպի սիստեմում, սակայն նրա ցանցի ընդարձակման և ճյուղավորման պատճառով խնդիր դրվեց կազմակերպել առանձին մասնագիտական կոոպերատիվ ընկերություններ՝ ըստ առանձին կուլտուրաների։ 1927 թվականի վերջերին կազմակերպվեցին բամբակագործական, Հայգինկոոպ, շերամապահական, ծխախոտագործական, անասնապահական և այլ կոոպերատիվ կենտրոններ։

Ավելի արագ էր կատարվում Արարատյան դաշտավայրում տեխնիկական կուլտուրաների մշակումով զբաղվող գյուղական տնտեսությունների կոոպերացումը։

Այգեգործության զարգացման խնդրում նշանակալի դեր էին խաղում գինեգործական կոոպերատիվ ընկերությունները, որոնց մեջ ընդգրկված էր աշխատավորական տնտեսությունների 65 տոկոսը։ Կոոպերացիան մեծ չափով օգնում էր գյուղացիներին պարարտանյութերով, գյուղգործիքներով և սիստեմատիկ պայքար էր կազմակերպում «չոռ» և մյուս հիվանդությունների դեմ։ Խաղողի բերքատվությունը 1927 թվականին՝ 1924 թվականի համեմատությամբ բարձրացավ երկու անգամ։

Գյուղ կոոպերացիան նշանակալի օգնություն էր ցույց տալիս՝ գյուղատնտեսական մեքենաներ, գյուղ գործիքներ մատակարարելու խնդրում։ 1927—28 թվականին Հայաստանի կոոպերատիվ ընկերությունների միջոցով գյուղ էր ուղարկվել՝ 4726 գութան, 181 խոտհունձ մեքենա, 48 շարքացան, 105 զիգզագ փոցխ, 100-ից ավելի սերմազտիչ մեքենա, 365 սերզատ և այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ։ Հայաստանի դաշտերում այդ ժամանակ աշխատում էին ավելի քան 166 տրակտոր, 27 կալսիչ մեքենա։[4]

Ռեսպուբլիկայում ընդարձակվում էր ագրո-կայանների, խրճիթ-լաբորատորիաների, փորձակայանների, անասնաբուժարանների ցանցը։ Գյուղատնտեսության մեջ աշխատում էին կգալի թվով մասնագետներ, գյուղատնտեսներ, սելեկցիոներներ, ագրոտեխնիկներ, փորձագետներ, զոոտեխնիկներ, անասնաբուժներ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 7, էջ 279։

[2] «Հայ գյուղկոոպի գործունեության հաշվետվությունը», Երևան, 1928 թ., էջ 20։

[3] Համկ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 1-ին, գործ 5, թերթ 95-100։

[4] Соц. строительство Арм. ССР, стр. 48.

Միջակ և հատկապես չքավորական գյուղական տնտեսություններին օգնելու գործում նշանակալի դեր էին խաղում գյուղ վարկային ընկերությունները, փոխօգնության կոմիտեները և չքավորական խմբակները։

1928 թվականի սկզբներին գյուղ վարկային ընկերությունների անդամ էին 28.000 գյուղական տնտեսություններ։ Վարկ ընկերությունների միջոցով 1926—1927 թվերին պետությունը բաց էր թողել ավելի քան 5 միլիոն ռուբլու վարկ։[1] Ստացված վարկերը գյուղական տնտեսություններում օգտագործում էին գերազանցապես անասուններ և գյուղ գործիքներ ձեռք բերելու համար։

Պետական վարկի շնորհիվ զգալի չափով պակասեց քաշող անասուն, գյուղ գործիքներ չունեցող չքավոր գյուղացիական տնտեսությունների տոկոսը։ Օրինակ. 1925 թվականին քաշող անասուններ չունեին գյուղական տնտեսությունների 55,4 տոկոսը, 1928 թվականին միայն՝ 25,5 տոկոսը, 1925 թվականին կթու անասուններ չունեին 35 տոկոսը, 1928 թվականին՝ 15,2 տոկոսը։ Այս թվերի համեմատությունից պարզ է դառնում, թե պետական վարկը ինչպիսի մեծ օգնություն էր աշխատավորական տնտեսությունների վերականգնման գործում։

Մատակարարող և վաճառահանող կոոպերացիային զուգընթաց գյուղատնտեսության զարգացման գործում նշանակալի դեր էին կատարում նաև գյուղական փոխօգնության կոմիտեները։

Փոխօգնության կոմիտեները կոչված էին առաջին հերթին օգնություն, օժանդակություն կազմակերպելու չքավորական տնտեսություններին։ 1926—27 թվականին ՓՕԿ-երը իրենց միջոցներով մեծ քանակությամբ գյուղգործիքներ գնեցին ու բաժանեցին չքավորական տնտեսություններին։ Նրանք կարիքավոր տնտեսություններին օգնում էին նաև կոոպերատիվ փայավճարների մուծման գործում։

Ինչպես մատակարարող և վաճառահանող կոոպերացիան, այնպես էլ փոխօգնության կոմիտեներն իրենց տրամադրության տակ ունեին արդյունաբերական ձեռնարկություններ, մեքենաօգտագործական կայաններ, որոնք վերափոխիչ մեծ դեր կատարեցին ինչպես Սովետական Միության, նույնպես և Սովետական Հայաստանի գյուղատնտեսության զարգացման գործում, որը ռեալ պայմաններ էր ստեղծում մանր, ցիր ու ցան, փոշիացած անհատական տնտեսությունները կոլեկտիվ տնտեսությունների մեջ միավորելու համար։

Մատակարարող և վաճառահանող կոոպերացիան գյուղատնտեսության մեջ ռեալ բազա էր ստեղծել դեպի կոլխոզ շարժումը։

* * *

Հայաստանում ցանքատարածության, առանձնապես տեխնիկական կուլտուրաների մշակության ընդարձակման ու բերքատվության բարձրացման համար լուրջ նշանակություն ուներ ոռոգումը։

Իրիգացիոն ցանցի ընդարձակման գործում նշանակալի աշխատանքներ կատարվեցին 1926—1929 թվերին։

1926 թվականին շահագործման հանձնվեց Այղր-լճի ջրահան կայանը, որն աշխատում էր էլեկտրաէներգիայի ուժով։ Դա այն ժամանակ մեքենայացված ոռոգման առաջին փորձերից մեկն էր ՍՍՌՄ-ում։ Այղր-լճի ջրով ո-

[1] «Խ. Հ.» 2 մարտի. 1928 թ., № 52։

ոռոգվում էր 5000 հեկտար տարածություն։ 1928 թվականին շահագործման հանձնվեց նաև Սարգարաբաղի (Հոկտեմբերյան) ջրանցքը։

1926—27 թվականին շարունակվեցին Շիրակի ջրանցքի մայր առվի լայնացման և ցանցի ճյուղավորման աշխատանքները։ 1929 թվականին Շիրակի ջրանցքը ոռոգում էր ավելի քան 10 հազար հեկտար տարածություն, 1925 թվի 5500 հեկտարի դիմաց։ Նոր ջրանցքների կառուցման և հների ընդարձակման ու վերանորոգման շնորհիվ, 1926 թվականին ռեսպուբլիկայում ոռոգելի հողերի տարածությունը հասավ 110 հազար հեկտարի։[1] 1921—1928 թվականների ջրանցքների շինարարության և ճահիճների չորացման համար հատկացված կապիտալ ներդրումների գումարը կազմեց 8,5 միլիոն ռուբլի։[2] Այդ գումարից 5 միլիոն ռուբլին ներդրվել է 1926—1928 թվականներին։

Հայաստանի հիդրոֆիկացիոն սիստեմների բարդ կառուցումների և էներգետիկ ռեսուրսների ուսումնասիրության և օգտագործման խնդրում մեծ օգնություն են ցույց տալիս Մոսկվայի և Լենինգրադի մելիորատիվ և էներգետիկ ինստիտուտները։

Չքավոր և միջակ տնտեսություններին կոլեկտիվ տնտեսությունների մեջ միավորելու խնդրում կարևոր նշանակություն ունեցավ պարտիայի և Սովետական կառավարության՝ հողաբաժանման և հարկային քաղաքականության ճիշտ կիրառումը։

1927 թվականի նոյեմբերին Միութենական կառավարության հատուկ որոշմամբ հարկից ազատվեց չքավորական և միջակ տնտեսությունների մի զգալի մասը։ Գյուղական հարկի ծանրությունն ընկավ կուլակային տնտեսությունների վրա։

Կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության քաղաքականությունը գյուղում կերառելու գործում խոշոր դեր էին խաղում նաև չքավորական խմբակները։ Նրանց կազմակերպման լոզունգն ընկեր Ստալինն առաջադրել էր դեռ պարտիայի 14-րդ համագումարում։ «Ինչի՞ համար էր հարկավոր չքավորական խմբեր կազմակերպելու լոզունգը,— հարց էր տալիս ընկեր Ստալինը,— այդ հարկավոր էր, որպեսզի վերացնենք չքավորության փոշիացածությունը և հնարավորություն տանք նրան՝ կոմունիստների օգնությամբ կազմակերպվելու որպես ինքնուրույն քաղաքական ուժ, որը կարող է պրոլետարիատի համար կազմակերպված հենարան ծառայել գյուղում կուլակի դեմ մղվող պայքարում, միջակ գյուղացիության համար մղվող պայքարում...»[3]

Բոլշևիկների պարտիան, Սովետական կառավարությունը բոլոր գծերով նախապատրաստում էին մեր երկրի գյուղատնտեսության սոցիալիստական արմատական վերակառուցումը՝ կոլեկտիվացման ճանապարհով, լիկվիդացնելով գյուղի կապիտալիստական վերջին դասակարգին՝ կուլակությանը։

Արագ կերպով զարգանում էր սոցիալիստական ինդուստրացումը։ Գյուղատնտեսության ասպարեզում, սակայն, գործն այլ կերպ էր։ Հացահատիկային կուլտուրաների համախառն արտադրանքը, որը գլխավոր նշանակություն ուներ, հասել էր ընդամենը 91 տոկոսի, իսկ հացահատիկային արտա-

---

[1] Соц. строительство Арм. ССР, стр. 62.
[2] Նույն տեղում, էջ 43։
[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 7, էջ 367.

դրանքի ապրանքային մասը կազմում էր նախապատերազմյան մակարդակի միայն 37 տոկոսը։

Անհրաժեշտ էր ելք գտնել ստեղծված գրությունից և ցույց տալ գյուղացիական տնտեսության սոցիալիստական արմատական վերակառուցման ուղիները, առանց որի հնարավոր չէր սոցիալիզմի կառուցումը մեր երկրում։

Վ. Ի. Լենինը իր կոոպերատիվ պլանում նշել էր գյուղացիությանը սոցիալիստական շինարարության ռելսերի վրա դնելու, կոլեկտիվացման ուղին փոխադրելու ճանապարհները։ Ընկեր Ստալինը հանճարեղ կերպով մշակեց և կենսագործեց այդ պլանը։

Ընկեր Ստալինը նշում էր, որ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ճիշտ ռելսերի վրա դնելու համար ամենից անհրաժեշտը «... գյուղացիական մանր ու փոշիացած տնտեսությունների փոխարկումն է խոշոր ու միավորված տնտեսությունների՝ հողի հանրային մշակման հիմքի վրա, հողի կոլեկտիվ մշակման անցնելը՝ նոր, ավելի բարձր տեխնիկայի բազայի վրա»։[1]

Պարտիայի 15-րդ համագումարը ընկեր Ստալինի ցուցումներով մշակեց ՍՍՌՄ գյուղատնտեսության կոլեկտիվացման մեծ խնդրի իրագործման կոնկրետ միջոցառումների ծավալուն ծրագիրը։ Իզուր չէ, որ Պարտիայի 15-րդ համագումարը պատմության մեջ մտել է, որպես կոլեկտիվացման համագումար։

Համագումարի որոշումներում առանձնահատուկ տեղ էին գրավում պարտիայի և Սովետական կառավարության կոնկրետ միջոցառումները գյուղի տեխնիկական վերազինման և միլիոնավոր գյուղացիական տնտեսություններին սոցիալիստական խոշոր տնտեսությունների մեջ միավորելու մասին։

Պարտ համագումարը միաժամանակ դիրեկտիվ տվեց՝

«էլ ավելի զարգացնել հարձակումը կուլակության վրա և ձեռք առնել մի շարք նոր միջոցներ, որոնք կսահմանափակեն կապիտալիզմի զարգացումը գյուղում...»։[2]

Չնայած կոլխոզ շարժման ընդհանուր վերելքին, ցանքատարածությունների ընդարձակմանը, այնուամենայնիվ, մեր երկրի գյուղատնտեսության զարգացումը, առանձնապես հացի բնագավառում, շարունակում էր ետ մնալ, որը լուրջ վտանգ էր սպառնում և արգելակում էր սոցիալիստական ինդուստրացման առաջընթացը։

Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը կուրս վերցրին՝ ավելի ուժեղացնել կոլխոզ շարժումը։ Կոլխոզ տնտեսությունների կազմակերպման գործում էական նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի դիրեկտիվները՝ հողաշինարարության, հողօգտագործման, կոլեկտիվ տնտեսություններին ամեն կերպ խրախուսելու, աջակցելու և մի շարք այլ միջոցառումների մասին։

Ելնելով պարտիայի 15-րդ համագումարի որոշումներից, կառավարական հատուկ որոշմամբ սահմանվեցին արտոնություններ կոլխոզներում միավոր-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 10, էջ 346։

[2] ՀամԿ(բ) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, էջ 396։

վող գյուղական տնտեսությունների համար, ավելացվեց կոլխոզներին տրվող վարկերի գումարը։

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը լուրջ դժվարությունների էր հանդիպում։ Սուր բնույթ էր ստանում դասակարգային պայքարը։

Ընկեր Ստալինը սովորեցնում էր, որ գյուղացիական միլիոնավոր տնտեսատերերի անցումը սոցիալիզմի ուղին, չէր կարող իրագործվել խաղաղ ճանապարհով, առանց կապիտալիստական տարրերի, և առաջին հերթին, կուլակության ընդդիմադրության։ Այդ անցումը կատարվում էր գյուղում դասակարգային կատաղի պայքարի և կուլակության ջախջախման պայմաններում։

Գյուղի կապիտալիստական տարրերի պայքարն այդ շրջանում ուղղված էր մեկ կողմից՝ գյուղի սոցիալիստական հատվածի դեմ, մյուս կողմից՝ պետությանը կայուն գներով հացի վաճառքի դեմ։ Սովետական կառավարությունը ստիպված էր կուլակներից հացի ավելցուկը բռնագրավել։ Միաժամանակ արտոնություններ տրվեցին չքավորությանը. կուլակներից բռնագրված հացի քառորդ մասը հանձնվում էր չքավորներին։

Կուլակների դեմ վճռական պայքարի լծվեցին չքավորները և միջակները։ Ձեռնարկված միջոցառումները տվեցին իրենց արդյունքները։ Կուլակությունը մեկուսացվեց։ Ստեղծվեց հացի պաշար։ Հաջողությամբ առաջ էր գնում կոլխոզային շինարարությունը։

Պաշտպանելով կուլակության և քաղաքի կապիտալիստական տարրերի շահերը, պարտիայի քաղաքականության դեմ դուրս եկավ բուխարինական-ռիկովական խումբը, որը ձգտում էր վերացնել կուլակության դեմ ուղղված արտակարգ միջոցառումները, հորինելով «դասակարգային պայքարի մարման» և սոցիալիզմի մեջ կուլակության «խաղաղ ներաճման» հակալենինյան թեորիան։

«Բուխարինական-ռիկովական խմբի կուլակային հոգին չդիմացավ, և այդ խմբի կողմնակիցներն սկսեցին արդեն բացահայտորեն հանդես գալ ի պաշտպանություն կուլակության»։ Իսկ «իրենց թեորիապես ամրացնելու համար նրանք հորինեցին «դասակարգային պայքարի մարելու» ծիծաղաշարժ «թեորիան»... դրանով իսկ նրանք վերականգնում էին իրենց մաշված բուրժուական թեորիան, այն մասին, թե կուլակությունը խաղաղորեն ներաճելու է սոցիալիզմի մեջ...»։[1]

Հայաստանում քողարկված բուրժուա-նացիոնալիստական տարրերը՝ համագործակցելով տրոցկիստական-բուխարինական կոնտրռևոլուցիոներների հետ, ամեն կերպ ձգտում էին արգելքներ ստեղծել Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհին։

Հայաստանում, դասակարգային թշնամին իր պայքարն ուղղել էր գյուղական սովետների, նոր կազմակերպված կոլխոզների, գյուղկոոպերացիայի դեմ։ Կուլակային տարրերին տեղ-տեղ հաջողվել էր խցկվել սովետներում, վարկ-ընկերություններում, հողաբաժանման կոմիտեներում։

Լենինականի գավառի Թալինի գավառամասի վարկային ընկերության կուլակ նախագահը վիժեցրել էր գավառամասի վարկ ընկերության գործու-

[1] Համկ(բ) Պարտիայի Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 402--403։

նեությունը։ Լոռի-Փամբակի գավառի Վարանցովկայի (Կալինինո) գավառամասի վարչական ընկերության ղեկավարությունը կուլակային գիծ էր վարում։

Որոշ տեղերում կուլակները ճարպկորեն սողոսկել էին հողաբաժանման կոմիտեները։ Մեղրու և Դիլիջանի գավառների մի շարք գյուղերում 1928 թվականի հողաբաժանման ժամանակ նկատի չէին առնված չքավոր և միջակ գյուղացիության շահերը։

Հայաստանի բոլշևիկները՝ ջախջախելով կապիտալիստական տարրերի դիմադրությունը, ապահովեցին կոլխոզային շինարարության հաղթանակը։ Եթե մինչև 1928 թվականի փետրվար ամիսը ռեսպուբլիկայում կային 22 կոլխոզ (4 կոմունա),[1] ապա այդ նույն տարվա հոկտեմբերի 1-ին արդեն կազմակերպված էին 74 կոլխոզ։[2] Կոլխոզների ամրապնդման և նրանց հետագա զարգացման խնդրում կարևոր նշանակություն ունեցավ նրանց սիստեմատիկ վարկավորումը պետության կողմից։

Կոլխոզների կազմակերպման ու նրանց օժանդակության գործում նշանակալի դեր էին կատարում նաև սովխոզները։

1928 թվին Հայաստանում կազմակերպված սովխոզների թիվը հասնում էր 11-ի՝ այգեգործական, բամբակագործական, դաշտավարական, անասնապահական և այլն։

Դաշտավարական և բամբակագործական սովխոզներում հողամշակումը գերազանցապես կատարվում էր տրակտորներով։ Սովխոզների դերը և նշանակությունը կարևոր էր այն տեսակետից, որ նրանք սովետական տիպի տնտեսություններ էին, ցուցադրական նշանակություն ունեին գյուղացիների համար, նոր կազմակերպված կոլխոզների համար։ «Գյուղացիները մասսաներով գալիս էին սովխոզները, ՄՏԿ-ները՝ դիտում էին տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների աշխատանքը, իրենց հիացմունքն էին արտահայտում և տեղնուտեղը որոշում էին «մտնել կոլխոզները»։[3]

Ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, նույնպես և Սովետական Հայաստանում կոլխոզային շարժումը սկսեց ծավալվել 1929 թվականին։ 1929 թվականը ինչպես սոցիալիստական ինդուստրացման, նույնպես և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար հանդիսացավ մեծ բեկման տարի։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԵՎ ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ

Պարտիան և Սովետական կառավարությունը միջոցներ կուտակելով, առաջ քաշեցին սոցիալիստական ինդուստրացման տեմպի հարցը։ Այդ բանին հասնելու համար անհրաժեշտ էր ամենից առաջ ուշադրությունը կենտրոնացնել ծանր արդյունաբերության զարգացման վրա, քանի որ մեր ինդուստրիայի հետագա բուռն զարգացումն ամբողջապես կախված էր ծանր արդյունաբերությունից. «... առանց ծանր արդյունաբերության զարգացման,— ասում

---

1 Հայաստանի ազգարնակչությունը, տերիտորիան և արդյունաբերությունը, Երևան, 1928 թ., էջ 338։

2 ՀՍՍՌ կառավարության հաշվետվության նյութեր, 1926—27 և 1927—1928 թ.թ. Երևան, 1929 թ., էջ 134։

3 Համկ(բ) Պարտիայի Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 408։

էր ընկեր Ստալինը,— մենք ոչ մի արդյունաբերություն չենք կարող կառուցել, մենք ոչ մի ինդուստրացում չենք կարող կենսագործել»։[1]

Ընկեր Ստալինը մերկացրեց ժողովրդի թշնամիների ոտնձգությունները, մշակեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը։

Համկ(բ)Պարտիայի 16-րդ կոնֆերենցիան, որը կայացավ 1929 թվի ապրիլին, քննության առավ և հաստատեց ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը, որը՝ մեր ժողովուրդը նրա ստեղծողի անունով անվանեց Ստալինյան հնգամյա պլան։

Ստալինյան հնգամյա պլանով ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության մեջ ներդրումների գումարը 1928—1933 թվերի համար նախատեսվում էր 64,6 միլիարդ ռուբլի։ Այդ գումարից արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի մեջ ներդրվելու էր 19,5 միլիարդ ռուբլի, տրանսպորտի մեջ՝ 10 միլիարդ ռուբլի, գյուղատնտեսության մեջ՝ 23,2 միլիարդ ռուբլի։

Դա ՍՍՌՄ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ժամանակակից տեխնիկայով զինելու ստալինյան վիթխարի պլանն էր։

Ընկեր Ստալինի բնորոշումով «Հնգամյակի հիմնական խնդիրն էր՝ ստեղծել մեր երկրում այնպիսի ինդուստրիա, որն ընդունակ լիներ սոցիալիզմի հիմքի վրա վերազինելու և վերակառուցելու ոչ միայն արդյունաբերությունն իբրև ամբողջություն վերցրած, այլև տրանսպորտը և գյուղատնտեսությունը»։[3]

Առաջին հնգամյա պլանում իր լիակատար արտացոլումն էր գտել Լենինի—Ստալինի իմաստուն ազգային քաղաքականությունը։ Առավել ուշադրություն էր դարձվելու ազգային ռեսպուբլիկաների արդյունաբերության զարգացմանը և կուլտուրական շինարարության հարցերի վրա։

Համկ(բ) Պարտիայի 15-րդ համագումարի որոշման մեջ ուղղակի նշվում էր. «Հնգամյա պլանը հատուկ ուշադրություն պետք է դարձնի հետամնաց ազգային ծայրամասերի և ռայոնների էկոնոմիկայի և կուլտուրայի բարձրացման վրա... դրան համապատասխան նախատեսնի նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի բարձր տեմպեր»։[4]

1929 թվի հունվարին կայացավ Հայաստանի Կ(բ) Պարտիայի 6-րդ համագումարը, որտեղ քննության ենթարկվեցին ռեսպուբլիկայի հնգամյա պլանի նախանշումները։ Համագումարը խնդիր դրեց՝ պլանը վերջնականապես կազմելիս հիմնական ելակետ ընդունել Համկ(բ) Պարտիայի 15-րդ համագումարի որոշումները։

1929 թվի ապրիլին գումարվեց Հայաստանի սովետների 6-րդ համագումարը։ Այդ համագումարում քննության դրվեց և հաստատվեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը։

Պլանում ամբողջապես արտացոլվում էր ռեսպուբլիկայի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական շինարարության խնդիրները։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 137։

[2] Համկ(բ) Պարտիայի Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 406։

[3] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 11-րդ հրատ., Երևան, 1949 թ., էջ 452։

[4] ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, Москва, 1940 г., ч. II стр. 283.

Այդ պլանը նախատեսում էր գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի մաքսիմալ չափով զարգացումն ու նրա դիրքերի ամրապնդումը (սովխոզներ, կոլխոզներ, ՄՏԿ-ներ, գյուղկոոպերացիա) և տեխնիկական կուլտուրաների զարգացումը, հացահատիկային կուլտուրաների մշակման ընդարձակումը, անասնապահության զարգացումը՝ կերի բազայի ընդարձակման միջոցով։

Աշխատավորության նյութական դրության էլ ավելի բարելավման համար, պլանը նախատեսում էր աշխատավարձի բարձրացում, սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության ընդարձակում, հնգամյակի ընթացքում ընդհանուր, պարտադիր տարրական կրթության կիրառում, անգրագիտության վերացում, միջին և բարձր մասնագիտական կադրերի պատրաստման համար տեխնիկումների և ինստիտուտների ցանցի ընդարձակում։ Միաժամանակ նախատեսվում էր հիվանդանոցների, պոլիկլինիկաների, սանատորիաների և հանգստյան տների ավելացում։

Սովետական Հայաստանի հնգամյա պլանով ժողովրդական տնտեսության մեջ ներդրվելու էր 277 միլիոն ռուբլի։

Պղնձարդյունաբերության արագ վերականգնման ու հետագա զարգացման համար կապիտալ ներդրումները կազմելու էին 15 միլիոն ռուբլի։

Հնգամյա պլանով էլեկտրիֆիկացիայի զարգացման համար կապիտալ ներդրումները կազմելու էին մոտ 36 միլիոն ռուբլի։[1] Շահագործման էր հանձնվելու Զորագէսի հիդրոկայանը, Լենինականի Օրջոնիկիձեի անվան հիդրոկայանի երկրորդ հերթը, Երևանի հեդրոկայանի երկրորդ հերթը, հիմք էր դրվելու Քանաքեռդէսի հիդրոկայանի կառուցմանը, որը շահագործման էր հանձնվելու հնգամյակի վերջին տարում։ Կառուցվելու էին տեղական նշանակություն ունեցող հինգ էլեկտրակայաններ։ Էժան էներգետիկ բազայի ստեղծումը լայն հնարավորություն էր տալու քիմիական արդյունաբերության ինտենսիվ զարգացմանը։ Հնգամյակի ընթացքում քիմիական արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմելու էին 8 միլիոն ռուբլի։[2] Պլանով նախատեսված էր քիմիական արդյունաբերության գործարանների կառուցում՝ Երևանում, Կիրովականում, Ալավերդում։

Բամբակի կուլտուրայի բազայի վրա ընդարձակվում էր տեքստիլ արդյունաբերությունը։ Պլանով նախատեսվում էր 1933 թվականին Լենինականի տեքստիլ կոմբինատի մանարան գործարանի իլիկների թիվը հասցնել 100 հազարի, գործող մեքենաների՝ մինչև 2500-ի։ Երևանում հիմք էր դրվելու առաջին կարի գործարանի կառուցմանը, տեքստիլ արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումներ նախատեսվում էր ավելի քան 10 միլիոն ռուբլի։[3] Հնգամյակի վերջին տարում տեքստիլ արդյունաբերության արտադրանքը կազմելու էր 17,4 միլիոն ռուբլի։[4]

Լուրջ ուշադրություն էր դարձվելու սննդհամի արդյունաբերության ընդարձակման վրա։ Արդյունաբերության այդ ճյուղում նախատեսվում էր կա-

---

1 Соц. строительство Арм. ССР, стр. 20.

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 20։

4 Նույն տեղում, էջ 26։

պիտալ ներդրումներ՝ ավելի քան 13 միլիոն ռուբլի։[1] Կոնսերվի նոր գործարան էր կառուցվելու Հոկտեմբերյանում և ամբողջապես վերասարքավորվելու էր Երևանի կոնսերվի գործարանը։ Նախատեսվում էր գինու, սպիրտի և կոնյակի արդյունաբերության ձեռնարկությունների ընդարձակումը։

Այսպիսով՝ միայն արդյունաբերության մեջ հնգամյա պլանով կապիտալ ներդրումները կազմելու էին 109 միլիոն ռուբլի։[2] Ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը 1927—28 տարվա 28,2 միլիոն ռուբլուց հնգամյակի վերջին տարում հասնելու էր 110 միլիոն ռուբլու։ Այդ գումարի 85,6 միլիոն ռուբլին տալու էր խոշոր արդյունաբերությունը, իսկ 24,4 միլիոն ռուբլին՝ թեթև արդյունաբերությունը։[3]

Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ հնգամյակի վերջին տարում հասնելու էր 53 տոկոսի։ Ժողովրդական տնտեսության ներքին կառուցվածքի մեջ պլանով նախատեսված այդ փոփոխությունը, ճանապարհ էր հարթում Հայաստանը ագրարային երկրից վերածելու ինդուստրիալ երկրի։

Նախատեսվում էր 1933 թվին մասսայական դպրոցներում սովորողների թիվը հասցնել 180 հազար մարդու։

1933 թվին հիվանդանոցային մահճակալների թիվը հասնելու էր 1600-ի։ Սոց-կուլտ. ձեռնարկումների գծով հնգամյակում ծախսվելու էր մոտ 23,9 միլիոն ռուբլի։[4]

Հնգամյա պլանով լայն ծավալ էր ստանում քաղաքային շինարարությունը, առաջին հերթին շարունակվելու էր մայրաքաղաքի՝ Երևանի վերակառուցումը՝ էլ ավելի լայն մասշտաբով։ Քաղաքների բարեկարգման, բնակարանային և կոմունալ շինարարության վրա ծախսվելու էր 32 միլիոն ռուբլի։[5]

Հնգամյա պլանում պատշաճ տեղ էր գրավում գյուղատնտեսության զարգացումը՝ կոլեկտիվացման ուղիով։ Կոլխոզների թիվը հասնելու էր 450-ի, սովխոզներինը՝ 12-ի, գյուղատնտեսության մեջ ներդրումների գումարը հնգամյակի ընթացքում կազմելու էր մոտ 90 միլիոն ռուբլի,[6] որից սովխոզների ցանցի ընդարձակման, շինարարության և մեխանիզացիայի վրա ծախսվելու էր 27 միլիոն ռուբլի։ Հնգամյակի վերջին տարում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության արտադրանքը 1927—28 թվականի համեմատությամբ համարյա կրկնապատկվելու էր։ Այս թվերից դժվար չէ նկատել, որ Հայաստանի առաջին հնգամյա պլանի կարևորագույն խնդիրներից մեկն էլ հանդիսանում էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Ինչպես Սովետական Միության բոլոր ազգային ռեսպուբլիկաների, նույնպես և Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը ամբողջապես բխում էր ՍՍՌՄ Ստալինյան հնգամյա պլանից և կազմում էր նրա բաղկացուցիչ մասը։ Սովետական Միության ողջ աշխատավորությունը՝ տոգորված ջերմ խանդավառությամբ

---

1 Соц. строительство Арм. ССР, стр. 20.
2 Նույն տեղում, էջ 23։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում, էջ 21։
6 Նույն տեղում։

ու անձնազոհ աշխատանքով, մեծ ոգևորությամբ ընդունեց Ստալինյան հնգամյա հռչակավոր պլանը և ձեռնարկեց նրա կենսագործմանը։

1929 թվականի սկզբներին Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանում կազմակերպվեց կոմերիտական առաջին հարվածային բրիգադան, որի ձեռներեցությունը կարճ ժամանակում արձագանք գտավ Սովետական Միության համարյա բոլոր վայրերում։ «Կրասնի վիբորժեց»-իների օրինակով ամենուրեք կազմակերպվեցին հարվածային բրիգադաներ։[1] ՀամԿ(բ)Պարտիայի 16-րդ կոնֆերենցիան դիմեց մեր երկրի աշխատավորությանը հատուկ կոչով՝ ծավալել սոցիալիստական մրցությունը։

Մրցությունը և հնգամյակը, մատնանշվում էր այդ կոչում, անխզելիորեն կապված են իրար հետ։ Ծավալվող սոցիալիստական մրցությունը ամենուրեք դիտվում էր որպես հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու լավագույն պայմաններից մեկը։ Պարտիայի կոչը աշխատանքային հսկայական խանդավառություն առաջ բերեց Սովետական Միության բանվորների և գյուղացիների ամենալայն շրջաններում։

Սոցիալիստական մրցության ծավալման գործում անգնահատելի դեր խաղաց Վ. Ի. Լենինի՝ 1918 թ. գրած «Ինչպես կազմակերպել մրցությունը» նշանավոր աշխատության հրատարակությունը 1929 թվին։ Այդ աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշում էր. «Մենք պետք է տոգորվենք աշխատանքային այն խանդավառությամբ, դեպի աշխատանք մղող այն կամքով, այնպիսի համառությամբ, որից այժմ կախված է բանվորների ու գյուղացիների ամենաարագ փրկությունը, ժողովրդական տնտեսության փրկությունը»։[2]

Ընկեր Ստալինը, սոցիալիստական մրցությունը բնորոշել է որպես սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդ՝ հիմնված աշխատավորական միլիոնավոր մասսաների առավելագույն ակտիվության վրա։

«Իրոք,— գրում էր ընկեր Ստալինը,— մրցությունն այն լծակն է, որի օգնությամբ բանվոր դասակարգը կոչված է հեղաշրջելու երկրի սմբողջ տնտեսական և կուլտուրական կյանքը՝ սոցիալիզմի բազայի վրա»։[3]

Ընկեր Ստալինը իր «Մրցությունը և մասսաների աշխատանքային ոգևորությունը» նշանավոր հոդվածում խիստ քննադատության էր ենթարկում և նախազգուշացնում այն ղեկավարներին, որոնք կամա թե ակամա արգելակում էին բանվորների ակտիվ ձեռներեցությունը սոցիալիստական մրցություն ծավալելու գործում։ Մրցության մեջ առաջնորդը տեսնում էր մասսաների գործարար ռևոլուցիոն ինքնաքննադատության արտահայտությունը, որը հիմնվում էր միլիոնավոր աշխատավորների ստեղծարար նախաձեռնության վրա։[4]

Բոլշևիկյան պարտիան, առաջնորդվելով ընկեր Ստալինի ցուցումներով, կազմակերպեց ու ոգեշնչեց սոցիալիստական մրցությունը։ Ղեկավարվելով սոցիալիստական մրցության նշանակության մասին Լենինի և Ստալինի ցուցումներով, պարտիան լայնորեն ծավալեց մասսաների մինչ այդ չտեսնված ստեղծարար նախաձեռնությունը՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Մոսկվայի և Լենինգրադի բանվորները, որոնք սոցմրցման կազմակերպ-

---

[1] Ա. Լիոնտև, Հնգամյակի հիմնական դիրեկտիվները, Երևան, 1930 թիվ, էջ 51–52։
[2] В. И. Ленин. Соч., т. XXV, стр. 477.
[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 123։
[4] Նույն տեղում, էջ 124։

ման գործում առաջին նախաձեռնողները հանդիսացան, հատուկ կոչով դիմեցին ՍՍՌՄ բոլոր բանվորներին։ Նրանց կոչը բուռն արձագանք գտավ ամբողջ Միության միլիոնավոր աշխատավորների շրջանում։

ՀամԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն 1929 թվի նոյեմբերին մի կոչով դիմեց բազմամիլիոն կոմսոմոլի բանակին, բանվոր երիտասարդությանը սոցիալիստական մրցության մեջ լինել առաջավորների շարքերում։ Սկսվեց կոմսոմոլի և երիտասարդության բուռն շարժումը, նշանաբան ընդունելով՝ հնգամյա պլանը չորս տարում կատարելու համար։

Աշխատանքային կոմունիստական մեթոդը՝ սոցիալիստական մրցությունը լայնորեն տարածվում էր նաև Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարության մեջ և կոլխոզային գյուղում։

1929 թվի հունիսին Ռիոնգէսի շինարարության հարվածայինները հատուկ պատգամավորություն ուղարկեցին Հայաստան՝ Զորագէսի կառուցողների հետ սոցիալիստական մրցության պայմանագիր կնքելու։ Զորագէսը կառուցող կոլեկտիվը ջերմորեն ընդունեց ռիոնգէսցիների սոցմրցման հրավերը և պարտավորություն վերցրեց— կառուցել էժան, արագ, լավ։

Մրցության շնորհիվ 1929 թվականի երկրորդ կեսին Զորագէսում շինարարության ինքնարժեքն իջեցվեց 10 տոկոսով, իսկ աշխատանքային արտադրողականությունը բարձրացավ 25 տոկոսով։[1]

Սոցիալիստական մրցության դուրս եկան Երևանի բամբակազտիչ գործարանի և Լենինականի «Մայիսյան ապստամբության» անվան տեքստիլ կոմբինատի բանվորները։ Տեքստիլ կոմբինատի մանվածքային գործարանում մրցության շնորհիվ արտադրողականությունը բարձրացավ 18 տոկոսով։ Պլանով նախատեսված արտադրանքից 25 տոկոս ավելի էին տալիս նույն կոմբինատի գործվածքային գործարանի բանվորները։[2]

Սոցիալիստական աշխատանքի մեթոդը լայն կիրառում գտավ Երևանի Կարբիդի գործարանում։ Մրցության շնորհիվ այստեղ արտադրանքը բարձրացավ 32,5 տոկոսով, ինքնարժեքն իջեցվեց 10 տոկոսով։ Խնայողաբար էր ծախսվում քարածուխը, կիրը, էլեկտրաէներգիան։ Կարբիդագործները մրցում էին Լենինդրադի «Կարմիր ավտոդեն» գործարանի բանվորների հետ։ Սոցիալիստական մրցությունը լայն կիրառում գտավ Հայաստանի լեռնահանքային, առանձնապես պղնձարդյունաբերության աշխատավորների մեջ։ Ամենուրեք երևան էր դալիս բանվորների ստեղծագործական եռանդն ու նախաձեռնությունը։ Ալավերդու պարտկազմակերպության ղեկավարությամբ Շամլուղի հանքերում կազմակերպվեցին 15 կոմերիտական և երիտասարդական հարվածային բրիգադներ, որոնք արտադրական նորմաները գերակատարում էին։

Աշխատանքային կոմունիստական մեթոդը սոցմրցությունը ծավալվում էին նաև երկաթուղային տրանսպորտում։

Անդրկովկասի երկաթուղային 4-րդ բաժանմունքի երկաթուղայինները, որոնք սպասարկում էին գերազանցապես Հայաստանի տերիտորիայից անցնող ուղեմասերը, սոցիալիստական մրցության մեջ էին գտնվում Բաթումիի երկաթուղայինների հետ։ Հայաստանի երկաթուղային բանվորներից 1600

[1] «Խորհրդային Հայաստան», 12 դեկտեմբերի, 1929 թվ։
[2] «Բանվոր», 29 նոյեմբերի, 1929 թվ։

մարդ մրցության մեջ էին մտել միմյանց հետ և ունեին սոցիալիստական մրցության անհատական պայմանագրեր։

Երկաթուղայինները պատվով էին կատարում պարտիայի և կառավարության առաջադրանքները։

Սոցիալիստական մրցությունն աստիճանաբար արմատավորվում էր Հայաստանի սովխոզներում ու կոլխոզներում։

Ակներև էին սոցիալիստական մրցության առաջին տարվա հաջողությունները։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության մի շարք ճյուղերում (պղնձի, թեթև արդյունաբերության, շինանյութերի, շինարարության և այլն) արտադրողականությունը բարձրացավ 33 տոկոսով։ Արտադրողականությունը բարձրացնելու գործում կարևոր դեր էին խաղում արտադրական խորհրդակցություններն ու հարվածային բանվորների կոնֆերենցիաները։

Ընկեր Ստալինը՝ խոսելով սոցիալիստական մրցության առաջին տարիների հաջողությունների մասին, նշում էր, որ սոցիալիստական մրցությունը ցույց տվեց աշխատանքի և նրան նոր ձևով վերաբերվելու հիանալի օրինակներ։ Բանվորներն ու կոլխոզնիկները շատ ձեռնարկություններում, կոլխոզներում ու սովխոզներում առաջադրեցին հանդիպական պլաններ։ Նրանք ցույց տվին հերոսական աշխատանքի օրինակներ։ Նրանք ոչ միայն կատարում, այլև գերակատարում էին սոցիալիստական շինարարության բնագավառում պարտիայի և կառավարության նշած պլանները։ Փոխվում էին մարդկանց հայացքները աշխատանքի նկատմամբ։ Աշխատանքն անազատ և տաժանակիր պարհակից, ինչպես կապիտալիզմի ժամանակ էր, դառնում է «պատվի գործ, վաստակի գործ, արիության ու հերոսության գործ»։[1]

Սովետական Միության անծայրածիր երկրով մեկ վիթխարի արդյունաբերական շինարարություն էր գնում, սոցիալիզմի հոյակապ շինարարություն, որի նմանը մինչ այդ դեռ չէր տեսել պատմությունը։

Դնեպրի միջափյա վայրերը, ուր քարքարոտ սահանքները դարերից ի վեր արգելք էին հանդիսանում նավերի երթևեկությանը, ոչ միայն նավարկելի էր դարձվում, այլև այդ նույն տեղում կառուցվում էր Եվրոպայի ամենահզոր հիդրոէլեկտրակայանը՝ Դնեպրոգէսը։ Դոնբասում, Ստալինգրադում, Յարոսլավլում, Բերեզնիկովում՝ Ուրալում և այլ վայրերում վեր էին խոյանում սոցիալիստական ինդուստրիայի, ծանր արդյունաբերության հոյակապ կոթողները։ Կառուցվում էին մետալուրգիական կոմբինատներ, գոմենյան հնոցներ, մարտենյան վառարաններ, ավտոմոբիլի և տրակտորի գործարաններ, քիմիական արդյունաբերության գիգանտներ։

Հնգամյակի առաջին երկու տարում մենք ՍՍՌՄ-ում արդեն լուրջ նվաճումներ ունեինք սոցիալիստական ինդուստրիայի առանձնապես ծանր ինդուստրիայի բնագավառում։

«Այդ նշանակում է, որ մեր տնտեսական անկախության հիմքը,— մեր ծանր ինդուստրիան,— մենք արդեն բարձրացրել ենք և շարունակում ենք ծավալել»,[2]— ասում է ընկեր Ստալինը։

Սոցիալիստական ինդուստրիան խոշոր քայլեր էր կատարում նաև Անդրկովկասում։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 354։

2 Նույն տեղում, էջ 300։

Սոցիալիստական ինդուստրիայի հոյակապ պլանի կատարման ու գերակատարման համար մղվող պայքարում, Անդրկովկասի բոլշևիկների առաջ նոր խնդիրներ էին ծառանում՝ աշխատանքի ծանրության կենտրոնը դարձնել արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացումը, գլխավորել Անդրկովկասի բազմահազար բանվորների ու գյուղացիների ստեղծագործ աշխատանը։

Անդրկովկասի պարտիական և սովետական օրգանների աշխատանքում շրջադարձ կատարվեց Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1929 թվականի նոյեմբերի դիրեկտիվից հետո, որտեղ ասվում էր՝ «Անդրկովկասի ֆեդերացիայի մարմինները, որոնք առաջին շրջանում առավելապես քաղաքական դեր էին խաղում և ապահովել էին Անդրկովկասի ազգային հանրապետությունների հաջող զարգացումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը և ազգամիջյան խաղաղության ամրապնդումը, ներկա շրջանում պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերն ազգային հանրապետությունների տնտեսական սոցիալիստական շինարարության վրա, նրանց ինդուստրացման և գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալական վերափոխության վրա»։[1]

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծագործական աշխատանքի և ֆեդերացիայի մեջ մտնող ազգային ռեսպուբլիկաների պարտիական և սովետական ապարատի էլ ավելի լայն ինքնագործունեության ու նախաձեռնության շնորհիվ, լուրջ պայքար ծավալվեց հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։

Մեր երկրի սոցիալիստական արդյունաբերության զարգացման գործում կենսական նշանակություն ուներ նավթարդյունաբերությունը։

Նավթարդյունաբերության ընդարձակման և նրա պլանի գերակատարման համար մղվող պայքարը պսակվեց աննախընթաց հաջողությամբ։ Հնգամյա պլանի առաջին երկու տարում՝ 1928-29—1929-30 թվականներին նավթարդյունաբերությունը տվեց 809 միլիոն ռուբլու արտադրանք, այսինքն հնգամյա պլանով ծրագրված արտադրանքի 83 տոկոսը։

Մեծ էին հաջողությունները ոչ միայն նավթարդյունաբերության, այլ Անդրֆեդերացիայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր ճյուղերում։ Բավական է հիշատակել այն փաստը, որ Անդրկովկասի ամբողջ արդյունաբերությունը 1925 թվականի համեմատությամբ 1929 թվականին աճեց ավելի քան չորս անգամ։[2]

Ինչպես առաջին հնգամյակին նախորդող տարիներին, նույնպես և հնգամյակի տարիներին Անդրկովկասում սոցիալիստական ինդուստրիայի զարգացման տեմպը բարձր էր միութենական արդյունաբերության զարգացման ընդհանուր տեմպից։ Այդ փաստն ինքնին վկայում էր, որ նախկին հետամնաց ազգային ռեսպուբլիկաները, այդ թվում և Անդրֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաներն արագորեն վերացնում էին իրենց տնտեսական անհավասարությունը։

Ստալինյան առաջին հնգամյա պլանը մեծ հաջողությամբ էր իրագործվում Սովետական Հայաստանում։ Խոշոր ներդրումներ էին կատարվում ինդուստրիալ արդյունաբերության մեջ։

[1] «Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի, 1929 թ.։
[2] «Խ. Հ.», 15 դեկտեմբերի, 1929 թ.։

Եթե առաջին հնգամյակի նախընթաց ութը տարում (1921—1928) ռեսպուբլիկայի արդյունաբերության հիմնական ճյուղերում ներդրումների գումարը կազմում էր 27,2 միլիոն ռուբ., ապա հնգամյակի առաջին երկու տարում՝ 1928-29—1929-30 թվականներին ներդրվեց՝ 45 միլիոն ռուբլի։[1]

Ամենից բարձր տեմպերով էր առաջ գնում Հայաստանի էներգետիկ և պղնձի արդյունաբերության զարգացումը։ Այդ երևում է կապիտալ ներդրումների հսկայական աճից։ Առաջին հնգամյակի նախընթաց 8 տարում արդյունաբերության այդ ճյուղերում կապիտալ ներդրումների գումարը կազմում էր միայն 8,5 միլիոն ռուբլի։ Հնգամյակի առաջին երկու տարում 1928—29 և 1929—30 թվականներին՝ ներդրումների գումարը կազմեց 19 միլիոն ռուբլի, այսինքն աճեց մոտ երկու և կես անգամ։[2]

1929 թվականի վերջերին հիմք դրվեց այն ժամանակվա ամենախոշոր կառուցումներից մեկի՝ Քանաքեռգէսի հզոր հիդրոէլեկտրակայանի կառուցմանը։ Շահագործման հանձնվեցին Լենինականի և Երևանի հիդրոկայանների երկրորդ հերթերը։

Էներգետիկայի բուռն զարգացումը Սովետական Հայաստանում անսահման հեռանկարներ էր բաց անում սոցիալիստական արդյունաբերության հետագա խոշոր վերելքի համար։ Լուրջ նվաճումներ ձեռք բերվեցին պղնձարդյունաբերության զարգացման ուղղությամբ։ Արագ կերպով վերականգնվում էին Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը և ձուլման գործարանները։

Հետազոտական աշխատանքներ էին կատարվում նոր հանքավայրեր հայտնաբերելու գործում։ Առաջին հնգամյակի առաջին տարվա (1928—1929 թ. թ.) պղնձահանքի արդյունահանման պլանը նախորդ՝ 1927—28 թվականի համեմատությամբ գերակատարվեց ավելի քան 28 տոկոսով, իսկ պղնձի պլանը նույն տարիների համեմատությամբ գերակատարվեց մոտ 21 տոկոսով։[3]

Պետական խոշոր արդյունաբերության ճյուղերի մեջ ամենից արագ զարգանում էր քիմիական արդյունաբերությունը։ 1928—29 թվականին, 1927—28 թվականի համեմատությամբ կարբիտի արտադրանքը բարձրացավ ավելի քան 46 տոկոսով։[4]

Հնգամյակի առաջին տարիներում Երևանում, Ալավերդում և Ղարաքիլիսայում (Կիրովական) հիմնադրվեցին խոշոր գործարաններ։ Արդյունաբերական շինարարությունը լայն ծավալ էր ստանում նաև Լենինականում ու Ղափանում։

Հնգամյակի առաջին տարում ռեսպուբլիկայի խոշոր արդյունաբերության արտադրանքը կազմեց մոտ 36 միլիոն ռուբլի, 1927—28 թվականի 28 միլիոն ռուբլու դիմաց, տալով աճ մոտ 29 տոկոս։ Սոցիալիստական արդյունաբերության զարգացման աճը Հայաստանում, գերազանցում էր Միության արդյունաբերության աճման միջին մակարդակը։ Այս փաստը ինքնին վկայում էր Լենինի—Ստալինի ազգային քաղաքականության ճիշտ կիրառումը ազգային ռեսպուբլիկաներում։

Արդյունաբերության աճը կատարվում էր մասնավոր սեկտորը արտամղելու ուղիով։

---

1 Соц. строительство Арм. ССР, стр. 20.

2 Նույն տեղում։

3 Աշխատանքը Հայաստանում, էջ 205։

4 Նույն տեղում։

Մինչդեռ հնգամյակի երկրորդ տարում Հայաստանում արդեն մասնավորի արտադրանքը պետական խոշոր արդյունաբերության մեջ համարյա չքացավ։ «... Կապիտալիստական տարրերը խոշոր արդյունաբերության մեջ արդեն հատակն են իջել,— ասում էր ընկեր Ստալինը Պարտիայի 16-րդ համագումարում։— Պարզ է, որ «ով-ում»-ի հարցը, այն հարցը թե արդյունաբերության մեջ արդյոք սոցիալի՞զմը կհաղթի կապիտալիստական տարրերին, թե՞ նրանք կհաղթեն սոցիալիզմին,— արդեն լուծված է հօգուտ արդյունաբերության սոցիալիստական ձևերի։ Լուծված է վերջնականապես ու անդառնալիորեն»։[1]

Սոցիալիստական հզոր ինդուստրիայի արագ զարգացումը անսահման հնարավորություններ էր ստեղծում արագ թափով առաջ մղելու գյուղի արմատական վերակառուցումը՝ կոլխոզային ճանապարհով։

1928—29 թ. թ. և հետագա տարիներին գյուղատնտեսական մեքենաների, առանձնապես տրակտորների մասսայական առաքումը կոլխոզներին, ՄՏԿ-ների կազմակերպումը, սովխոզների և կոլխոզների օրինակելի աշխատանքը, պետության հատկացրած խոշոր վարկերը, հսկայական դեր կատարեցին կոլխոզային շարժման գործում, որն սկիզբ առավ 1929 թվականին, և ավելի լայն ծավալ ստացավ նույն տարվա երկրորդ կեսին։

1929 թվականի սկզբներին կազմակերպվեց կոլխոզների ռեսպուբլիկական կենտրոն, որն ապահովելու էր կոլխոզների կազմակերպական ղեկավարությունը։

Կոլխոզների տնտեսական, նյութական բազան ամրացնելու համար կառավարության որոշմամբ, առանց հատուցման, կոլխոզներին հանձնվեցին նրանց տերիտորիաներում գտնվող ջրադացները, ձիթհանները և այլն։ Ավելացվեցին կոլխոզներին տրվող վարկերը։ ՀԿ(բ)Պ ԿԿ-ի և ՀՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ցուցումներով ռեսպուբլիկայի Հողմոդկոմատը և Հայգյուղկոոպը գյուղատնտեսական մեքենաներով և գործիքներով ապահովեցին կոլխոզներին և գյուղկոոպ ընկերություններին։

Մինչև 1929 թվականի ապրիլ ամիսը ավարտվեցին կոլխոզների միջգյուղյան և ներքին հողաշինարարության աշխատանքները։ Գյուղի կապիտալիստական տարրերը զրկվում էին մասսաներին հնշելով ու կեղեքելով ձեռք բերված լավ հողերից։ Կոլխոզային աշխատանքները մեքենայացնելու, ագրոկանոնները կիրառելու, բերքատվությունը բարձրացնելու, կոլխոզային արտադրությունը պլանավորելու համար կոլտնտեսություններին ամրացվեցին գյուղատնտեսական մասնագետներ։[2]

Կոլխոզների կազմակերպման ու ամրացման գործում խոշոր աշխատանք էին կատարում բանվորական կոլեկտիվները։

Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և Սովետական Միության այլ արդյունաբերական քաղաքների բանվորների օրինակով, Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները գերազանցապես բանվորներից կազմված բրիգադաները, գյուղ գնալով գլխավորում էին աշխատավոր գյուղացիության շրջադարձը դեպի կոլխոզները։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 302—303։

2 Հայկական ՍՍՌ օրենքների ու կարգադրությունների ժողովածու, 1929 թ., № 1, հոդված 3։

Լենինականի երկաթգծի դեպոյի բանվորներից կազմված բրիգադները քաղաքական մասսայական սիստեմատիկ աշխատանք էին կատարում Դուզքենդի (Ախուրյան), Համամլուի (Սպիտակ) շրջանների գյուղերում։ Բանվոր ագիտատորները գյուղացիներին բացատրում էին պարտիայի քաղաքականությունը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդրում։ Սովխոզների և կոլխոզ տնտեսությունների օրինակով գյուղացիներին ցույց էին տալիս կոլխոզների առավելություններն անհատական տնտեսությունների նկատմամբ։

Բանվորական բրիգադները աշխատավոր գյուղացիությանը, կոլխոզներին օգնում էին նաև գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վերանորոգման աշխատանքներում, որովհետև կոլխոզները այդ շրջանում դեռևս չունեին իրենց վերանորոգման արհեստանոցները։

Բանվորների շեֆական օգնությունը կոլխոզներին՝ ընդգրկում է Հայաստանի գրեթե բոլոր արդյունաբերական վայրերը։ Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներից կազմված տասնյակ բրիգադներ սիստեմատիկ աշխատանք են կատարում Արարատյան դաշտի գյուղերում։ Ալավերդու և Ղափանի հանքագործներից առանձնացված բանվոր ագիտատորները կատարում են քաղաքական մասսայական աշխատանք։

Ընկեր Ստալինը, խոսելով գյուղում սոցիալիզմի կառուցման հաջողությունների մասին, առանձնապես նշում էր բանվորների կատարած հսկայական աշխատանքը՝ կոլխոզ շարժման կազմակերպման գործում. «Կոլխոզային շինարարության գործում այդ չտեսնված հաջողությունը բացատրվում է, վերջապես, նրանով, որ այդ գործն իրենց ձեռքն են առել մեր երկրի առաջավոր բանվորները։ Ես նկատի ունեմ բանվորական բրիգադները,— ասում էր ընկեր Ստալինը,— որոնք տասնյակներով ու հարյուրներով ցրված են մեր երկրի հիմնական շրջաններում։ Պետք է ընդունել, որ կոլխոզային շարժման բոլոր գոյություն ունեցող ու հնարավոր պրոպագանդիստներից լավագույն պրոպագանդիստները գյուղացիական մասսաների մեջ բանվոր-պրոպագանդիստներն են։ Էլ զարմանալի ի՞նչ կարող է լինել, որ բանվորներին հաջողվեց համոզել գյուղացիներին, որ խոշոր կոլեկտիվ տնտեսությունն առավելություն ունի անհատական մանր տնտեսության հանդեպ...»։[1]

Ընկեր Ստալինի ցուցումով բոլշևիկների պարտիան կոչ արեց մեր երկրի առաջավոր բանվորներին՝ գյուղում մշտական աշխատանքի ուղարկել 25 հազար բանվոր։ Պարտիայի կոչը ջերմ արձագանք գտավ Հայաստանում։ Շատ առաջավոր բանվորներ ցանկություն հայտնեցին և գյուղ գնացին մշտական աշխատանքի։

Հայաստանում կոլխոզներն էին մտնում հարյուրավոր, հազարավոր աշխատավորական տնտեսություններ։ Նրանք կոլխոզ մտնելով ընդմիշտ ազատվում էին կուլակների շահագործումից, կարիքից ու չքավորությունից, համոզվելով, որ կոլխոզային ուղին ունևոր, կուլտուրական ու երջանիկ կյանքի ուղին է։

Սակայն, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, չէր կարող ընթանալ հեշտ ու խաղաղ ճանապարհով։ Կոլխոզային շինարարության հաջողություններին զուգընթաց ավելի էր սրվում դասակարգային պայքարը։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, է 144—145։

Սովետական կառավարությունը կուլակությանը սահմանափակելու քաղաքականությունից անցավ նրա արտամղման, իսկ 1929 թվականի վերջերից՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու քաղաքականությանը։

Հակալենինյան, հակաբոլշևիկյան տարրերը կուլակությանը ջախջախումից փրկելու համար, կատաղի դիմադրություն էին ցույց տալիս։

1929 թվականին կոլխոզային շարժումը ծավալվեց Հայաստանում, հատկապես Արարատյան դաշտի շրջաններում. Ղամարլուի (Արտաշատ), Ղուրդուղուլիի (Արմավիր), Էջմիածնի, Աշտարակի և այլ շրջաններում։ Գյուղացիությունը մեծ հոսանքով մտնում էր կոլխոզները։ Կոլխոզ էին մտնում չքավոր ու միջակ գյուղացիները։ Կոլխոզներում հողն արդեն սկսում էին մշակել տրակտորներով։ Շատ կոլխոզներ ոչ միայն ամրացել էին, այլև ցուցադրական դեր էին կատարում, ինչպես օրինակ Ղուրդուղուլիի (Հոկտեմբերյան), Հրազդանի (Կոտայքի շրջան), Խաթունարխի, Փարաքարի, Յուվայի և այլ կոլխոզներ։ Ղուրդուղուլու կուլակների աչքի առաջ բարձրանում ու ամրանում էր կոլխոզն իր հսկայական նվաճումներով, որպես օրինակելի սոցիալիստական տնտեսություն։ Ճաթղռանի կուլակները բոլոր միջոցներով փորձեցին ցրել կոլխոզը, այդ նրանց չհաջողվեց, բայց կուլակների ստոր դավերի հետևանքով զգալիորեն տուժեց կոլխոզը։ Նոր-Բայազետի գավառում կուլակները տեռորի ենթարկեցին Փոքր Մազրայի գյուղսովետի նախագահին, իսկ Լենինականի գավառում, Ղոլղաթի գյուղսովետի նախագահին։

Լավրենտի Պավլովիչ Բերիան, իր «Հողմացրիվ անել, փոշիացնել սոցիալիզմի թշնամիներին» նշանավոր հոդվածում գրում էր. «Շատ հաճախ պարտիայի ու Սովետական իշխանության թշնամիներն ազգային ռեսպուբլիկաների պայմաններում քողարկվում են ազգային կենցաղային առանձնահատկություններով ու տրադիցիաներով, բնավ պատահական չէ, որ առանձին տրոցկիստական զինովևական կոնտր-ռևոլուցիոն տարրերն, իրենց վնասարար ու տեռորիստական աշխատանքը քողարկելու համար Անդրկովկասի ռեսպուբլիկաների աշխատավոր ժողովուրդների ազգային իղձերն արտահայտողների դիմակ են հագնում»։[1] Այդ կերպ էին հանդես գալիս հայ ժողովրդի ստոր թշնամիները, որոնք դեռ այն ժամանակ քողարկված, հարվածում էին սոցիալիզմի կառուցմանը, գյուղատնտեսության կոլեկտիվացմանը։ Նրանց ձգտումն էր շեղել մեր երկրի գյուղատնտեսության զարգացումը սոցիալիզմի ուղուց։

Բուրժուա-նացիոնալիստները ժխտում էին կուլակության գոյությունը Հայաստանում, համարելով այն ինչ-որ «Հոգեբանական կատեգորիա»։ Նրանց նպատակն էր փրկել կուլակությանը ջախջախումից։

Դասակարգային պայքարը սուր կերպարանք էր ստացել նաև քաղաքի սոցիալիստական սեկտորի և կապիտալիստական տարրերի միջև։

Ընկեր Ստալինը այդ մասին ասել է. «Մահացող դասակարգերը դիմադրում են ոչ թե այն պատճառով, որ նրանք ավելի ուժեղ են դարձել, քան մենք, այլ այն պատճառով, որ սոցիալիզմն ավելի արագ է աճում, քան նրանք, և նրանք ավելի թույլ են դառնում, քան մենք։ Եվ հենց այն պատ-

[1] Լ. Պ. Բերիա, «Հողմացրիվ անել, փոշիացնել սոցիալիզմի թշնամիներին», «Խորհրդային Հայաստան», 21 օգոստոսի, 1936 թ., № 192։

ճառով, որ նրանք ավելի թույլ են դառնում, նրանք զգում են իրենց գոյության վերջին օրերը և հարկադրված են դիմադրել բոլոր ուժերով, բոլոր միջոցներով։[1]

Բոլշևիկյան պարտիան ջախջախեց և իր շարքերից վտարեց տրոցկիստա-բուխարինական դավաճաններին ու նրանց թափթփուկներին։

Այդ շրջանում կարևոր նշանակություն ունեցավ պարտիայի շարքերի զտումը թշնամական՝ տարրերից, որը սկսվեց 1929 թվականի վերջերին, ՀամԿ(բ) Պարտիայի 16-րդ կոնֆերենցիայի որոշմամբ։

Հայաստանի Կ(բ) Պարտիան իր շարքերը մաքրելով և թշնամիներին ոչընչացնելով, էլ ավելի սերտորեն էր համախմբվում ՀամԿ(բ)Պ Կենտկոմի շուրջը, Մեծ Ստալինի շուրջը, որի ղեկավարությամբ հայ ժողովուրդը խոշոր նվաճումներ էր ձեռք բերել սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի բոլոր ֆրոնտներում։

Կարևոր նշանակություն ունեցավ այդ ժամանակ (1929 թիվ) նաև պետական ապարատի զտումը։ «Պետական ապարատի որոշ խճողվածությունը,— ասում էր ընկեր Մոլոտովը,— պրոլետարիատի խորթ տարրերով, պարտիային հարկադրեց ձեռնարկել պետ ապարատի հատուկ զտումներ»։[2]

Ռեսպուբլիկայի պետական ապարատի զտման շնորհիվ չինովնիկ բյուրոկրատ տարրերը զրկվեցին պետական ապարատում աշխատելու իրավունքից։

Պետական ապարատն ավելի ճկուն դարձավ, իսկ նրա ներքին օղակները մասսաներին ավելի մոտ դարձնելու համար, կատարվեց վարչատնտեսական նոր շրջանցում։

1929 թվի հուլիսից Հայաստանում վերացվեցին մինչ այդ գոյություն ունեցող վարչական բաժանումները։

Հայաստանում նախկին ինը գավառների փոխարեն կազմակերպվեց 5 գավառ (օկրուգ)։ Երևանի գավառի մեջ մտնում էին 10 շրջան (ռայոն), Լենինականի՝ 7 շրջան, Լոռու՝ 5, Սևանի՝ 6, Զանգեզուրի՝ 3։[3]

* * *

Այսպիսով, բոլշևիկյան պարտիան, Սովետական կառավարությունը գյուղի սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստում էին ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում մեծ հաջողություններ ձեռք բերվեցին Սովետական Հայաստանում։ Մինչև 1929 թվականի հոկտեմբեր ամիսը կազմակերպված 175 կոլխոզի դիմաց, 1930 թ. հունվարի 1-ին արդեն հաշվվում էր 380 կոլխոզ։ Այդ կոլխոզներում ընդգրկված էին 15,9 հազար գյուղացիական աշխատավորական տնտեսություններ, որը կազմում էր մեր ռեսպուբլիկայի գյուղացիական տնտեսությունների 8,5 տոկոսը։ 1928 թվականի վերջին կոլխոզների ցանքերի տարածությունը կազմում էր 2,5 հազար հեկտար, 1930 թվականի հունվարի 1-ին 36,7 հազար հեկտար։ Այդ

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 43։

2 «Խ. Հ.», 24 սեպտեմբերի, 1929 թ։

3 Հայկական ՍՍՌ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1929 թիվ, հուլիս, հոդված 104։

նույն ժամանակում կոլխոզների հիմնական արտադրական ֆոնդերը կազմեցին 4 միլիոն ռուբլի։[1]

Ընկեր Ստալինը, ամփոփելով 1929 թվականին մեր ձեռք բերած հսկայական նվաճումները սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության շինարարության բնագավառում, 1929 թվականն անվանեց մեծ բեկման տարի։ Այդ բեկումն ընթանում էր, նշում էր ընկեր Ստալինը. «... քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանաբանով։ Այդ հարձակման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դա մեզ արդեն մի շարք վճռական հաջողություններ է տվել մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման (ռեկոնստրուկցիայի) հիմնական բնագավառներում»։[2]

Մեծ բեկումը, ամենից առաջ, արտահայտվեց աշխատանքի արտադրողականության բնագավառում։ Սոցիալիստական մրցությունը, որը ծավալվել էր 1929 թվականի սկզբից, դարձավ սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդը։ Մրցության շնորհիվ հնարավոր դարձավ մեծ չափով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, կատարել ինքնարժեքի իջեցում, մեծացնել ռեզերվների օգտագործումը, ապահովելով ու պայմաններ ստեղծելով առաջին հնգամյակը չորս տարում կատարելու համար։

Բոլշևիկների պարտիան և Սովետական կառավարությունը լիովին համոզված էին, որ սովետական ժողովուրդն իր ուժերով առանց արտաքին օգնության, նյութական միջոցներ կգտնի սոցիալիստական ինդուստրիայի արագ զարգացման համար։ Այդպես էլ կատարվեց։

1929 թ. արմատական բեկման տարի հանդիսացավ և գյուղատնտեսության բնագավառում։ «Խոսքը վերաբերում է,— գրում էր ընկեր Ստալինը,— մեր հողագործության զարգացման մեջ տեղի ունեցած արմատական բեկմանը մանր ու հետամնաց անհատական տնտեսությունից դեպի խոշոր ու առաջավոր կոլեկտիվ հողագործությունը, դեպի հողի միատեղ մշակումը, դեպի մեքենա-տրակտորային կայանները, դեպի արտելները, կոլխոզները, որոնք հենվում են նոր տեխնիկայի վրա, վերջապես դեպի սովխոզ-գիգանտները, որոնք զինված են հարյուրավոր տրակտորներով ու կոմբայններով»։[3]

Այդ հաջողությունները կոմունիստական պարտիայի, սովետական երկրի համաշխարհային պատմական հաղթանակն էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարում, որն արմատապես փոխում էր նրա զարգացման ուղղությունն ու բնույթը։ Գյուղատնտեսության մեջ տեղի ունեցած արմատական բեկման հիմքը 1929 թվականին, հանդիսացավ այն, որ միջակը մտնում էր կոլխոզ։ Ներկա կոլխոզային շարժման մեջ նորն ու վճռականն այն է, «... որ գյուղացիները կոլխոզներն են մտնում ոչ թե առանձին խմբերով, ինչպես այդ տեղի էր ունենում առաջ, այլ ամբողջ գյուղերով, վոլոստներով ու շրջաններով, նույնիսկ օկրուգներով։

Իսկ ի՞նչ է նշանակում այդ։ Այդ նշանակում է, որ միջակը մտավ կոլխոզները։ Այս է գյուղատնտեսության զարգացման մեջ կատարված այն ար-

---

[1] «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935 թ., էջ 118—119։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 133։

[3] Նույն տեղում, էջ 140—141։

մատական բեկման հիմքը, որը Սովետական իշխանության կարևորագույն նվաճումն է անցած տարվա ընթացքում»։[1]

Մեծ բեկման տարին՝ 1929 թվականը, ինչպես ՍՍՌՄ-ի բոլոր ժողովուրդների, այդ թվում և նրա անբաժանելի մասը կազմող հայ ժողովրդի պատմության մեջ բնորոշվում է, որպես սոցիալիզմի կառուցման խոշորագույն հաղթանակ՝ ժողովրդական տնտեսության, աշխատավորության նյութական և կուլտուրական դրության բարելավման գործում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Ընկեր Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ, սոցիալիստական ինդուստրացման, կոլխոզային շինարարության հոյակապ ծրագրի կենսագործումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման համար։ Աշխատավորների տընտեսական և կուլտուրական կյանքի բարելավումով պայմանավորվում էր մեր երկրի բնակչության աննախընթաց աճը։

1929 թվի մարդահամարի տվյալներով, 1926 թվականի համեմատությամբ բնակչությունն աճեց 12 տոկոսով, կամ տարեկան միջին աճը կազմեց 4 տոկոս։ Դա ռեկորդային աճ էր։ Այդ նույն տվյալներով, քաղաքներում բնակվում էին 200 հազար մարդ կամ ամբողջ բնակչության 20,6 տոկոսը։[2]

Հայաստանում բանվոր ծառայողների թիվը 1926 թվականի 18.219 մարդուց 1928 թվականին բարձրացավ ավելի քան 42.000 մարդու, աշխատավարձի ֆոնդը նույն տարիների համեմատությամբ կրկնապատկվեց. 15 միլիոն ռուբլուց բարձրացավ ավելի քան 30 միլիոն ռուբլու։ Պետական սոցիալական ապահովագրության ֆոնդը նույն տարիների համեմատությամբ նույնպես կրկնապատկվեց։[3]

1926—29 թվականներին խոշոր չափով աճում էր ապրանքաշրջանառությունը, որը վկայում էր Հայաստանի աշխատավորության սպառունակության աճը։ Պետական և կոոպերատիվ առևտրի ընդարձակման շնորհիվ, առևտրի ասպարեզից դուրս էր մղվում մասնավորը, որը դեռ 1926—27 թվականներին։ իր ձեռքումն էր պահում մանրածախս առևտրի զգալի մասը։ 1925—26 տընտեսական տարում խոշոր և մանր ապրանքաշրջանառությունը ռեսպուբլիկայում կազմում էր 66 միլիոն ռուբլի, 1928—29 տարում այն բարձրացավ 108,4 միլիոն ռուբլու։ Այս թվերից պարզ ու որոշակի երևում է, որ Հայաստանի աշխատավորության զնողունակության բարձրացման հետևանքով շարունակ ընդարձակվում էր սովետական առևտուրը։ Առևտրի ասպարեզում բոլշևիկյան պարտիայի և սովետական կառավարության վարած քաղաքականության շնորհիվ Սովետական Հայաստանում մեծաքանակ առևտրի ասպարեզից 1929 թվին մասնավորն արդեն չքացել էր, իսկ մանրածախ առևտրի մեջ իշնում էր հատակը։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 148—149։

2 Соц. строительство Арм. ССР, стр. 9. «Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում», Երևան, 1930 թ., էջ 19։

3 Соц. строительство Арм. ССР. стр. 12—13. «Աշխատանքը Հայաստանում», վիճակագրական ժողովածու, Երևան, 1927 թ., էջ 2—3։

Զգալիորեն աճում էր նաև տեղական արդյունաբերությունը, որի զարգացմանը խոշոր չափով նպաստում էր ծանր ինդուստրիայի արագ վերելքը։

1928 թվականի վերջերին Հայաստանում աշխատում էին շինանյութեր արտադրող՝ 14, սննդի և համի՝ 7, սիլիկատի՝ 3, տեքստիլ-տրիկոտաժի՝ 3 տեղական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկություններ։ Միայն 1927—28 տնտեսական տարում գործարկվեցին տեղական արդյունաբերական 8 նոր ձեռնարկություններ։ 1925—27 թվականներին տեղական արդյունաբերության մեջ ներդրվեց մոտ 4 միլիոն ռուբլի։

1925—26 թվականին իր սոցիալական կառուցվածքով բոլորովին այլ պատկեր էր ներկայացնում ռեսպուբլիկայի արհեստավորների և տնայնագործների մանր արդյունաբերությունը։ Այստեղ հանրայնացման միակ ճանապարհը նրանց կոոպերացումն էր, սակայն, մասնավոր արհեստավորների, տնայնագործների ծայրահեղ ցրվածության պատճառով, նրանց կոոպերացումը դժվարությունների էր հանդիպում։ Հայաստանի պարտիական և սովետական օրգանները զգալի աշխատանք կատարեցին արհեստագործական կոոպերացիայի կազմակերպման ու ամրապնդման ուղղությամբ։ Մինչև 1925 թվականը արհեստագործական կոոպերացիան Հայաստանում գտնվում էր կազմակերպական շրջանում և՝ որպես կազմակերպող օրգան կոչվում էր «Տնայնաարհեստագործական Կոմիտե», որը հետագայում դարձավ «Հայաստանի տնայնաարդյունաբերական և արհեստագործական Կոոպերացիա» (Հայտնարկոոպ)։

ՍՍՌՄ կառավարության հատուկ որոշմամբ 1925 թվականի վերջերին Հայտնարկոոպը մտավ Համամիութենական տնայնա-արհեստավորական արդյունաբերական կոոպերացիայի սիստեմի մեջ, որով և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեց նրա հետագա արագ զարգացման համար։

Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը առանձնակի ուշադրություն էին դարձնում մեր երկրի աշխատավորության համար անհրաժեշտ բնակարանային, կոմունալ ու կուլտ-կենցաղային հարմարանքներ ստեղծելու, նոր սոցիալիստական քաղաքներ կառուցելու և հների վերակառուցման գործի վրա։

Ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում արդյունաբերական շինարարության զուգընթաց մեծ ծավալ ստացավ քաղաքային շինարարությունը։ Բնակարանային և կոմունալ շինարարությունն առաջին հերթին ծավալվում էր մայրաքաղաքում՝ Երևանում և արդյունաբերական կենտրոններ Լենինականում, Ալավերդում, Ղափանում, Կիրովականում և ուրիշ վայրերում։

Երևանում կառուցվում էին բազմաթիվ նոր բնակելի շենքեր, բացվում էին նոր փողոցներ ու այգիներ, սալահատակվում ու մայթվում էին հին և նորակառույց փողոցները՝ ըստ ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախագծի։

1927—1928 թվականներին Երևանում ձեռնարկվեց երկու խոշոր նորակառույց շենքերի՝ Կառավարական տան և Ժողովրդական տան (օպերայի և բալետի թատրոն) կառուցմանը՝ ակադեմիկոս Թամանյանի նախագծով։

Հատուկ ուշադրություն էր դարձվում բնակարանային շինարարության վրա։ Բացի Պետության միջոցներով կառուցվող բազմաթիվ բնակելի տներից, պետությունը հսկայական միջոցներ էր տրամադրում բնակշինկոոպ ընկերու-

թյուններին, բանվորներին ու ծառայողներին՝ բնակարանային շինարարության համար։ Երևանի քաղաքային Գործադիր Կոմիտեն հողամասեր էր հատկացնում, երկարատև վարկ, շինանյութեր էր բաց թողնում անհատական բնակարաններ կառուցելու համար։

Լենինականը 1926—29 թվերին գավառական հետամնաց քաղաքից դառնում էր ռեսպուբլիկայի արդյունաբերական ու կուլտուրական կարևոր կենտրոններից մեկը։ Լենինականի բուռն զարգացմանը մեծապես նպաստեցին տեքստիլի, երկաթգծի, շոգեքարշային արհեստանոցների և այլ արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։ 1926 թվականին մշակվում էր այդ քաղաքի վերակառուցման, վերաշինման ու ընդարձակման նախագիծը, երբ նա ենթարկվեց բնական լուրջ աղետի։ 1926 թվականի հոկտեմբերի 22-ին Շիրակի դաշտավայրում տեղի ունեցած երկրաշարժից խիստ տուժեցին Լենինական քաղաքը և շրջակա գյուղերը։ Սովետական ժողովուրդը կազմակերպեց լայն օգնություն։ ՍՍՌՄ-ի բոլոր ծայրերից դրամական օգնություն, հարյուրավոր վագոններով շինանյութեր, պարեն էր ստացվում երկրաշարժից տուժած բնակչության համար։

Միութենական կառավարության, եղբայրական ռեսպուբլիկաների և մեր երկրի աշխատավորության նյութական և բարոյական լայն օգնության շնորհիվ կարճ ժամանակում լիկվիդացվեցին աղետի հետևանքները։

Լենինականի և նրա գավառի բնակչությանը երկրաշարժի օրերին անգնահատելի օգնություն և օժանդակություն ցուցաբերեցին Վրաստանից օգնության եկած բժշկական խմբերը և հրշեջները, թվով մոտ 200 մարդ։ Հաճախ փտանգի ենթարկելով իրենց կյանքը, փլատակների տակից դուրս էին բերում վիրավորներին և ցույց տալիս բժշկական առաջին օգնություն։ Ռուս և վրաց ժողովուրդների այդ ազնիվ գավակների անձնուրաց վերաբերմունքը, երախտագիտության ջերմ զգացմունքով էր լցնում աղետյալների սրտերը։

Հայաստանի աշխատավորության վրա մեծ տպավորություն գործեց ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահ Միխայիլ Իվանովիչ Կալինինի այցը Լենինական, 1927 թվականի մայիսին։ Մ. Ի. Կալինինը Շիրակի աշխատավորությանը կոչ էր անում ուժեղացնել կառուցման աշխատանքները, անհապաղ վերացնել աղետի հետևանքները։[1]

1927—29 թվականներին ոչ միայն ամբողջապես լիկվիդացվեց երկրաշարժի հետքերը, այլև Լենինականը դարձավ անճանաչելի։ Կառուցվեցին մի քանի տասնյակ բազմահարկ շենքեր, բացվեցին նոր փողոցներ, կառուցվեցին նոր հյուրանոցի գեղեցիկ շենքը, քաղաքային թատրոնը, երկաթգծի հիվանդանոցի նոր կորպուսները։

Քաղաքային կոմունալ ու բնակարանային շինարարությունը զգալի ծավալ էր ստացել նաև ռեսպուբլիկայի մնացած քաղաքներում, գավառային կենտրոններում և մասամբ գյուղերում։

Կիրովականը փոքրիկ ամառանոցային ավանից դառնում էր արագ աճող արդյունաբերական մի կենտրոն։ Արդյունաբերական կենտրոններ՝ Ղափանում, Ալավերդում կառուցվում էին լուսավոր ու գեղեցիկ տասնյակ բազմա-

1 «Ռ. Հ.», 3 հունիսի, 1927 թ.։

հարկ բնակելի շենքեր՝ նախկին փայտյա բարակների ու խրճիթների փոխարեն։

1926—29 թվականներին ռեսպուբլիկայում բնակարանային ֆոնդն ավելացավ ավելի քան 100 հազար քառ. մետր տարածությամբ։ Քաղաքային շինարարության համար պետությունը հսկայական միջոցներ էր տրամադրում։

1926—29 թվականներին ավելի մեծ հնարավորություններ ստեղծվեցին ուժեղացնելու խճուղիների և ճանապարհների կառուցողական աշխատանքները։ Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ռեսպուբլիկական և տեղական նշանակություն ունեցող մի շարք խճուղիներ։ Հատուկ ուշադրություն էր դարձվում Միութենական նշանակություն ունեցող խճուղիների բարեկարգման վրա։ Առանձին ուղեմասերում լայնացվում էին ճանապարհները և կամուրջները։ 1926—28 թվականներին խճուղիների և ճանապարհների կառուցման վրա ծախսվեց ավելի քան մեկ միլիոն ռուբլի։

Հատուկ ուշադրություն էր դարձվում աշխատավորության առողջության վրա, լուրջ աշխատանք էր կատարվում մալարիայի դեմ պայքարելու ուղղությամբ։ Այդ տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ ճահիճների չորացումը։

1926—29 թվականներին կազմակերպվեցին նոր հիվանդանոցներ, ծննդատներ, բուժարաններ, ամբուլատորիաներ, ստացիոնար բուժումների մասնագիտական ինստիտուտներ և այլն։ Ռիտա-հետազոտական խոշոր աշխատանք էր կատարվում Հայաստանի հանքային ջրերի բուժիչ հատկությունները որոշելու և այն աշխատավորությանը ի սպաս դնելու ուղղությամբ։

Արզնին և Դիլիջանը վերածվեցին կուրորտների։ 1927—28 թվերին Դիլիջանում և Արզնիում կառուցվեցին սանատորիաների առաջին կորպուսները, որտեղ և կատարվում էին հիվանդների ստացիոնար բուժումներ։ Այդ նույն թվին Արզնի սանատորիայում կառուցվեց հանքային ջրերի վերամշակման առաջին գործարանը։ 1928 թվականին ընդարձակվեց Դիլիջանի կուրորտը, կառուցվեց երկրորդ կորպուսը, հանգստի և բուժման հիանալի վայրեր դարձան Կիրովականը, Ծաղկաձորը, Ախթալան։

Լենինի—Ստալինի պարտիայի մեծ հոգատարությունը աշխատավորության առողջապահության պահպանման նկատմամբ, տալիս էր իր փայլուն արդյունքը։

Նոր ծավալ է ստանում Սփյուռքի հայ աշխատավորության շարժումը՝ վերադառնալ Սովետական Հայաստան, մասնակից դառնալ մեր երկրի հոյակապ շինարարությանը։

Այդ տարիներին Հունաստանից, Թուրքիայից, Եգիպտոսից և այլ երկրներից Հայաստան վերադարձան ավելի քան 7500 տարագիր հայ աշխատավորներ։ Ներգաղթի կազմակերպմանը խոշոր օգնություն ցույց տվեցին ՍՍՌՄ և Անդրֆեդերացիայի կառավարությունները, նյութական խոշոր միջոցներ տրամադրեցին ներգաղթողներին։ Սովետական Հայաստանի նոր քաղաքացիներին տրվեց դրամական օժանդակություն՝ վարկ։ Նրանք հնարավորություն ստացան իրենց համար կառուցելու բնակելի տներ, ձեռք բերեցին սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, անասուններ և այլն։ Բացի այդ՝ Հայաստանի կառավարությունն իր միջոցներից հատկացրեց մեկ միլիոն ռուբլի՝ ներգաղթածների համար նոր ավաններ ու գյուղեր կառուցելու նպատակով։ 1927 թվականին հիմնադրվեցին Արաբկիր և Նոր Սեբաստիա ավանները, իսկ

Արազդայանի դաշտավայրում հիմք դրվեցին մի քանի նոր գյուղերի։ ՍՍՌՄ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի որոշմամբ Հայաստանի կառավարությանը դրամական միջոցներ էր տրվում՝ հետագա տարիներին շարունակելու համար արտասահմանում ապրող հայ աշխատավորության վերադարձը Սովետական Հայրենիք, նրանց կապիտալիստական ստրկությունից փրկելու համար։

* * *

Սովետական Միության աշխատավորության նյութական դրության բարելավման հետ միասին բարելավվում էր և նրանց կուլտուրական կյանքը։

1926—29 թվականներին Հայաստանում զգալի ծավալ ստացավ կուլտուրական շինարարությունը։

Մինչև 1926 թվականը Հայաստանում հազարավոր մեծահասակներ վերացրին իրենց անգրագիտությունը։ Սակայն անգրագիտության լիկվիդացման գործում ավելի մեծ աշխատանք կատարվեց 1926—1929 թվականներին։

1929 թվականի մայիսին ՀամԿ(բ) Պ Կենտրոնական Կոմիտեն խնդիր դրեց ավելի ուժեղացնել պայքարն անգրագիտության վերացման համար։ Կենտրոնական Կոմիտեն ցուցում տվեց անգրագիտության վերացման աշխատանքը կազմակերպել ընդհանուր պլանով։

1929 թվականին Միութենական և ռեսպուբլիկական բյուջեներով լրացուցիչ հատկացումներ կատարվեցին անգրագիտության վերացման ձեռնարկումների համար։ Հայաստանի Ժողկոմսովետին կից հիմնվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով՝ լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանի նախագահությամբ։ Առաջին հնգամյա պլանով ծրագրվեց ամբողջապես վերացնել բնակչության միջից անգրագիտությունը։

Լուրջ աշխատանք էր կատարվում մասսայական դպրոցների ցանցի ընդարձակման ուղղությամբ։ Նախապատրաստական լայն աշխատանք էր կատարվում՝ ամենակարճ ժամանակում անց կացնելու համար ընդհանուր տարրական կրթությունը։

ՀամԿ(բ) Պարտիայի 15-րդ համագումարը դիրեկտիվներ տվեց պարտիական և սովետական կազմակերպություններին՝ ամեն կերպ օգնություն և օժանդակություն ցույց տալ լուսավորական օրգաններին, սովետներին՝ կուլտուրական շինարարության հարցերում։ Համագումարի դիրեկտիվներում առանձնապես նշվում էր հետամնաց ազգային ռեսպուբլիկաներում կուլտուրլուսավորական աշխատանքների, հատկապես մասսայական դպրոցների ցանցի ընդարձակման հարցերի վրա առավել մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը։

Համագումարի այդ պատմական դիրեկտիվները հսկայական նշանակություն ունեցան ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների կուլտուրական շինարարության աննախընթաց վերելքի համար։ Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին Հայաստանում ծավալվեց նաև դպրոցական շինարարությունը։ Եթե 1924—25 ուսումնական տարում Սովետական Հայաստանի տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում էին 76.989 աշակերտ, ապա 1928—29 ուս. տարում՝ սովորողների[1] թիվը հասնում էր 86.225

[1] ВКП(б) в резолюциях и решениях, ч. II, стр. 258.

աշակերտի։[1] Դպրոցական հասակ ունեցող երեխաների ճնշող մեծամասնությունն ընդգրկված էին դպրոցներում։ Ավելացավ ուսուցչության թիվը։

Նյութական, կենցաղային բարենպաստ պայմաններ ստեղծվեցին կուլտուրական ֆրոնտի աշխատողների, մասնավորապես ուսուցչության համար։ 1927 թվականին՝ 1923 թվականի համեմատությամբ կրկնապատկվեց ուսուցիչների աշխատավարձը։ Այդ տարիներին գյուղերում և քաղաքներում կառուցվեցին տասնյակ նոր դպրոցական շենքեր։

Ստալինյան առաջին հնգամյակի սկզբի տարիներից մենք հնարավորություն ունեցանք իրագործելու տարրական ընդհանուր պարտադիր կրթությունը։ «... վերջին ժամանակներս մենք արդեն վերականգնել ենք ծանր արդյունաբերությունը և այն շարժում ենք առաջ,— ասում էր ընկեր Ստալինը 16-րդ պարտ. համագումարում։— Հետևաբար, հասել է ժամանակը, երբ մենք պետք է ձեռնամուխ լինենք տարրական ընդհանուր պարտադիր ուսուցման կազմակերպմանը»։[2]

Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարում խոշոր նշանակություն ուներ կադրերի պատրաստման հարցը։ Ընկեր Ստալինը խոսելով սոցիալիստական ինդուստրացման դժվարությունների և կադրերի մասին, նշում էր. «Ծանր արդյունաբերության կառուցման պրոբլեմը չի կարելի լիովին լուծված համարել, մինչև չլուծվի կադրերի պրոբլեմը։

Այստեղից՝ պարտիայի խնդիրը— «ընդհուպ ձեռնամուխ լինել կադրերի պրոբլեմին և ինչպես էլ լինի՝ տիրել այդ ամրոցին»։[3]

Մեր երկրի համար անհրաժեշտ էին հարյուրավոր և հազարավոր նոր կադրեր, «որոնք կարող են դառնալ գործի տերը գիտելիքների ամենաբազմազան ճյուղերում։ Առանց դրան,— ասում էր ընկեր Ստալինը,— ավելորդ է խոսել մեր երկրի սոցիալիստական շինարարության արագ տեմպի մասին։ Առանց դրան ավելորդ է ասել, թե մենք կկարողանանք հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական երկրներից»։[4]

Սոցիալիզմի կառուցման հզոր առաջընթացի համար կարևոր նշանակություն ուներ նաև ազգային կադրերի պատրաստման խնդիրը։

Բոլշևիկների պարտիան ամբողջ եռանդով և գործարարությամբ ձեռնամուխ եղավ այդ կարևորագույն պրոբլեմի լուծմանը։ Սովետական Հայաստանում 1927—29 թվականներին մեծ չափով ընդարձակվեց միջին և բարձր որակի կադրեր պատրաստող ուսումնական հաստատությունների ցանցը։ Այդ նույն տարիներին տեխնիկումներում, բանֆակներում, ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում սովորում էին 5000 մարդ։ Մինչև 1926 թվականը Հայաստանում կար միայն երկու բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Պետական Համալսարանը և Կոնսերվատորիան։ 1927 թվականի հոկտեմբերին Երևանում բացվեց բարձրագույն կրթության կադրերի պատրաստման մի նոր հաստատություն՝ Համամիութենական Անասնաբուժական Ինստիտուտը, հայկական և ռուսական բաժիններով։

Այդ ժամանակաշրջանում համալսարանը հանդիսանում էր Հայկական

---

1 Соц. строительство Арм. ССР, стр. 108.

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 337։

3 Նույն տեղում, էջ 140։

4 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 86—87։

ՍՍՌ ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման օջախը։ Համալսարանն ուներ 5 ֆակուլտետ. բժշկական, սոց-տնտեսագիտական, գյուղատնտեսական, ֆիզիկո-մաթեմատիկական և մանկավարժական։ Բոլոր ֆակուլտետներում սովորում էին 1300 ուսանող-ուսանողուհիներ։ Համալսարանի շուրջն էին համախմբված ռեսպուբլիկայի լավագույն մասնագետները։

Սովետական Հայաստանի միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունները հարյուրավոր ու հազարավոր նոր կադրեր էին տալիս ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում աշխատելու համար։

Որակյալ կադրերի պատրաստման գործում անգնահատելի դեր են կատարում Սովետական Միության կենտրոնական քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունները, գիտահետազոտական հիմնարկները, որտեղ սովորում են նաև Սովետական Հայաստանից գնացած մեծ թվով երիտասարդներ։

Սովետական Հայաստանի տնտեսական կյանքի, արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի զարգացմանը զուգահեռ սկսում էր զարգանալ նաև գիտությունը։

Հայաստանի Գիտության և Արվեստի Ինստիտուտը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի աջակցությամբ զբաղվում էր սոցիալիստական շինարարության հետ կապված որոշ պրոբլեմատիկ հարցերով։

Գիտության և Արվեստի ինստիտուտը՝ Մատենադարանի, Պատմական հուշարձանների կոմիտեի, Պետական Պատմական Թանգարանի և այլ հարուստ նյութերի հիման վրա զբաղվում էր նաև հայագիտությամբ։ 1926—29 թվականներին Գիտության և Արվեստի ինստիտուտը կատարեց հիշատակության արժանի մի քանի հնագիտական արշավներ, որոնց հիմնական նպատակն էր Հայաստանի տերիտորիայի վրա գտնվող բևեռագրերի հավաքումը։ Հրատարակվեցին վիմական արձանագրությունների ժողովածուներ։ Շարունակվում էին ուսումնասիրվել ճարտարապետական խոշոր արժեք ներկայացնող կոթողները։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների համար կարևոր նշանակություն ունեցան ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի գիտական արշավախմբի կատարած գիտա-հետազոտական ուսումնասիրությունները Սևանի ավազանում, Արագածում և Արարատյան դաշտավայրում։

1927 թվականից ակադեմիկ Լեսինգի գլխավորած արշավախումբը լուրջ աշխատանք էր կատարում Սևանի ավազանի հիդրոլոգիական ռեժիմի ուսումնասիրության գործում։ Սևանում կազմակերպվեց հիդրոօդերևութաբանական բյուրո, հիդրոմետրոլոգիական կայան։ Էքսպեդիցիայի կատարած չափումների և ուսումնասիրությունների հիման վրա կազմվեցին Սևանա լճի բարեխառնության ռեժիմի սխեմաները, լճի խորության քարտեզները և այլն։ Այդ ուսումնասիրությունների գլխավոր նպատակն էր առաջ քաշել և պրակտիկ լուծում տալ լճի ջրի օգտագործմանը՝ էլեկտրիֆիկացիայի և ոռոգման համար, որը հետագայում վիթխարի նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի սոցիալիստական հզոր ինդուստրիայի զարգացման գործում։

Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության բարգավաճման գործում աչքի ընկնող աշխատանք էր կատարում Հայաստանի Լուսավո-

րության Ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանը։ 1929 թվի հոկտեմբերի 23-ին հանկարծամահ եղավ հին բոլշևիկ, աչքի ընկնող քաղաքական-հասարակական գործիչ, Հայաստանի Ժողկոմսովետի նախագահի տեղակալ, Լուսավորության Ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանը։ Նա սերտորեն կապված էր Հայաստանի գիտության և արվեստի հաստատությունների, գրողների հետ։

Այդ տարիներին նոր վերելք էր ապրում սովետահայ գրականությունը։ 1927 թվականի մարտին տեղի ունեցավ Հայաստանի պրոլետ գրողների Միության 2-րդ համագումարը։ Գրողների համագումարը, որին մասնակցում էին Եղբայրական Վրաստանի, Ադրբեջանի և մյուս ռեսպուբլիկաների դելեգացիաները, քննության առավ սովետական գրականության խնդիրները՝ կապված մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման հարցերի հետ։ Սովետահայ գրողները ոգևորված սոցիալիզմի շինարարության պաթոսով, իրենց ստեղծագործական ամբողջ կարողությունը տրամադրում են սոցիալիզմի կառուցման պատկերմանը, անձամբ մասնակցելով այդ կառուցմանը։

1926 թվին արտասահմանից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձավ նշանավոր վիպագիր Ալեքսանդր Շիրվանզադեն։ Նրա վրա խոշոր տպավորություն գործեց այն, որ մի քանի տարվա ընթացքում հայ ժողովուրդը՝ Սովետական կառավարության, ռուս մեծ ժողովրդի ու մյուս եղբայրական ժողովուրդների լայն աջակցությամբ մեծ աշխատանք էր կատարել երկրի վերաշինման գործում, ձեռք էր բերել ազատ ու երջանիկ կյանք, որի նմանը նա երբեք չէր ունեցել իր բազմադարյան պատմության ընթացքում։ «Մի անգամ էլ թերթենք մեր երկարամյա անցյալի ժամանակագրությունները,—ասում էր Ալ. Շիրվանզադեն,—և մի անգամ ևս համոզվենք, որ հայ ժողովուրդը երբեք չի ունեցել այն ազատությունը, որն ունի այժմ։ Եվ թող մեր նոր սերունդն այս գիտակցությամբ տոգորված և իրեն պարգևված լի ու լի հնարավորությամբ ոգևորված, կրկնապատկի իր եռանդը հայրենիքի վերաշինության համար»։

1927 թվի հոկտեմբերին Հայաստան այցի է գալիս կոմունիստ գրող Հանրի Բարբյուսը։ Նա այցելում է Երևան և Լենինական քաղաքները։ Բարբյուսի վրա մեծ տպավորություն էր գործել և Հայաստանի շինարարության օրեցօր աճող հզոր թափը։ «... Խորհրդային Միության հավասարաղոր անդամ Հայաստանում,— ասում էր հոչակավոր գրողը,—աճում է ու զարգանում է սոցիալիստական շինարարությունը»։[1]

Հայաստանից վերադառնալուց մի քանի ամիս հետո գրած «Հայաստանի բարեկամներիս» նամակում Բարբյուսն ասում էր. «Ես ուրախ եմ, որ պատեհություն է ներկայացնում ինձ իմ խոսքն ուղղել Հայաստանի աշխատավորությանը. այս առթիվ վերականգնում եմ հիշողությունն այն օրերի, որ անցյալ տարվա վերջերին ապրեցի այն գեղեցիկ երկրում, որ Հայաստանն է, և որն իր նկարագեղ ու խոր կյանքով վերարտադրելու եմ մի աշխատության մեջ, որը պատրաստում եմ։ Ես այնքան հաճախ և այնքան լիակատար համակրանքով հաղորդակից եմ եղել հայերի հետ, որ ինձ թվում է, թե միշտ բարեկամներիս հետ եմ...»։[2]

---

1 «Խորհրդ. Հայաստ.», 20 հոկտեմբերի, 1927 թիվ։
2 «Խորհրդ. Հայաստ.», 8 ապրիլի, 1928 թ.։

Սովետական Հայաստանի գրական կուլտուրական կյանքի նշանակալից իրադարձություններից մեկն էր՝ ռուս մեծ ժողովրդի զավակ, պրոլետարիատի մեծ երգիչ, Լենինի և Ստալինի մերձավոր բարեկամ հանճարեղ գրող Մաքսիմ Գորկու այցը Սովետական Միության ազգային ռեսպուբլիկաները։ 1928 թվականի հուլիսին Գորկին եկավ Սովետական Հայաստան։ Նրա ժամանումը Երևան՝ վերածվեց տոնախմբության։ Գումարվում է հատուկ միտինգ, որտեղ ելույթ է ունենում հայ ժողովրդի պատվավոր հյուրը՝ Մ. Գորկին։ Նա հիացմունքով է հայտնում, որ անցած կարճ ժամանակում Սովետական Միության բոլոր ժողովուրդները, որոնց թվում և հայ ժողովուրդը մեծ աշխատանք են կատարել ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ «Այն, ինչ որ ես այստեղ տեսնում եմ,— ասում էր Գորկին,— դա սկիզբն է վեհ աշխատանքի, իսկական նոր կյանքի, նոր կուլտուրայի...»։[1] Մ. Գորկին այցելում է նորակառույցները, նրա վրա մեծ տպավորություն է թողնում Երևանի առաջին հիդրոկայանը, Հայաստանի էլեկտրիֆիկացիայի հեռանկարները, կապված Սևանի պրոբլեմի հետ։ Գորկին հանդիպումներ է ունենում սովետահայ գրողների հետ։ Նրանց խորհուրդ է տալիս ամուր և գործարար կապ ստեղծել Սովետական Միության բոլոր ժողովուրդների, գրողների ու գրականագետների հետ, որպեսզի ժողովուրդները փոխադարձաբար հաղորդակից լինեն միմյանց տնտեսական ու կուլտուրական նվաճումներին։ Նա խնդիր էր դնում հրատարակել հատուկ ժուռնալ, որտեղ պետք է հանգես գային գրողներն ու գրականագետները։ Պետք է «... ոչ միայն գրականությունն արձանագրվի այդ հանդեսում,— ասում էր Գորկին,— այլև կուլտուրական կյանքի ամեն մի քայլ՝ գործարաններ, նոր գրված օպերա և այլն։ Գրել այն մասին, ինչ որ անում է կուլտուրական առաջավոր միավորը»։[2]

Հանճարեղ մտածողի իդեան էր ամեն կերպ վեր հանել այն նոր մարդուն, որն իր ամբողջ ուժն ու եռանդը ի սպաս է դրել սոցիալիզմի հոյակապ շենքի կառուցմանը։ Դրան հասնելու համար անհրաժեշտ էր կուլտուրական ուժերի համատեղ գործակցություն։ «Անհրաժեշտ է կուլտուրական բոլոր ուժերի միացում, որոնք ընթանում են նոր կուլտուրայի, նոր մարդու աշխատանքով և դրան հնարավոր է հասնել կոլեկտիվի աշխատանքով»։[3] Մ. Գորկու ուրվագծումները Սովետական Միության եղբայրական ժողովուրդների գրական ու կուլտուրական կապերն էլ ավելի ամուր դարձնելու խնդրում, իրագործվեցին ամենակարճ ժամանակում և որը չափազանց լուրջ նշանակություն ունեցավ ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների գրականության և ոչ միայն գրականության, այլև կուլտուրական հզոր վերելքի համար հետագա տարիներին։

Հայաստանի աշխատավորությունը, ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին, 1928 թվականին նշեց հռչակավոր գրողի, Սովետական Միության մեծ քաղաքացու՝ Մաքսիմ Գորկու ծննդյան 60-ամյակը և գրական, հասարակական-քաղաքական գործունեության 35-ամյա հոբելյանը։

Սովետական Հայաստանում զարգանում էր երաժշտական, թատերական, նկարչական, քանդակագործական և ճարտարապետական արվեստը։

Ռեսպուբլիկայի պետական կոնսերվատորիան հանդիսանում էր երա-

1 «Խ. Հ.», 27 հուլիսի, 1928 թիվ։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։

ժրշտական բարձրագույն կադրեր պատրաստելու կարևոր հաստատություն, որտեղ բավական թվով շնորհալի երիտասարդներ ստանում էին երաժշտական կրթություն։ Երաժշտական արվեստի մեջ ավելի խորանալու, կատարելագործվելու համար շնորհալի ու տաղանդավոր երիտասարդները գործուղվում էին Մոսկվա ու Լենինգրադ։

1924 թվականին Հայաստանի կառավարության հրավերով Երևան տեղափոխվեց նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարովը։ Նա լծվեց անխոնջ աշխատանքի. ավարտեց իր գլուխ գործոցը «Ալմաստ» օպերան, ապա գրեց «Երևանյան էտյուդներ» սքանչելի սիմֆոնիան։ Այդ նոր գործերով Ալ. Սպենդիարովը դրսևորեց իր ջերմ վերաբերմունքը դեպի նոր կյանքը։ 1926 թվին նշվեց ականավոր կոմպոզիտորի երաժշտական գործունեության 25-ամյա հոբելյանը։ Նրան շնորհվեց ժողովրդական արտիստի պատվավոր կոչում։ Ալեքսանդր Սպենդիարովն ապրում էր ստեղծագործական աշխատանքի ամենաեռուն շրջանը, երբ 1928 թվականի մայիսին ընդմիշտ դադարեց գործել մեծ երաժշտագետի սիրտը։[1]

Սոցիալիստական շինարարության այդ մեծ վերելքի տարիներին իրենց երաժշտական տաղանդը դրսևորեցին նշանավոր կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Արմեն և Նիկողայոս Տիգրանյանները և մի շարք շնորհալի երիտասարդ երաժշտագետներ։

Պատմական որոշ ուղի էր անցել սովետահայ թատրոնը։ Թատերական արվեստի խոշոր նվաճումն էր հանդիսանում այն փաստը, որ արդեն կազմակերպվել էին դերասանական շնորհալի խմբեր, որոնց մեջ աչքի էին ընկնում Երևանի և Լենինականի դերասանական կոլեկտիվները։ 1929 թվի նոյեմբերին կազմակերպվեց Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնը։ Երևանի և Լենինականի Պետական Դրամատիկ թատրոնները թևակոխել էին ստեղծագործական մի նոր ուղի։ Նրանց ռեպերտուարի մեջ խոշոր տեղ էին գրավում սոցիալիզմի շինարարության առօրյան պատկերող ժամանակակից պիեսները։ Մեծ հաջողությամբ բեմադրվում էին «Բեկում», «Լեռ», «Մանդատ», «Յասում» և այլ պիեսներ։

Արվեստի մյուս ճյուղերի մեջ, Հայաստանում նշանակալից տեղ էր գրավում և կինոն։

Սոցիալիստական շինարարության բուռն զարգացումն իր կնիքը դրեց նաև նկարչական արվեստի վրա։ Սովետահայ նկարիչները՝ ոգևորվելով սոցիալիստական ինդուստրացման հզոր վերելքով, իրենց ստեղծագործություններում պատկերում էին արդյունաբերության, շինարարության, կոլխոզային գյուղի առօրյան, նոր մարդկանց հերոիկան։

Անվանի արվեստագետ Մարտիրոս Սարյանը մեծ վարպետությամբ պատկերում է Ալավերդու պղնձաձուլական գործարանը, կատարում է բազմաթիվ նատյուր մորտեր և այլն։

Նշանավոր պորտրետիստ Աղաջանյանը կերտում է մեծ Ստալինի յուղաներկ պորտրեն։ Աճում է երիտասարդ նկարիչների նոր սերունդը։

Արագորեն ծավալվող արդյունաբերական և քաղաքային շինարարությունը երկրի ճարտարապետների առաջ բաց են անում ստեղծագործական լայն հնարավորություններ։ Մեր ճարտարապետության նվաճումներն արտա-

[1] «Խ. Հ.», 15 մայիսի, 1928 թվի։

հայտվում են արդյունաբերական օբեկտների կառուցման և քաղաքային շինարարության մեջ։

Հայաստանի ճարտարապետության զարգացման գործում անգնահատելի դեր է կատարում նշանավոր ճարտարապետ-ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը։ Նա հանդիսանալով ռուսական ազգային կլասիկ ճարտարապետության դպրոցի ներկայացուցիչներից մեկը, դարձավ սովետահայ ճարտարապետության հիմնադիրը, բազմաթիվ երիտասարդ ճարտարապետների ուսուցիչը։

Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին ընդարձակվում է կուլտուրական-լուսավորական հիմնարկների ցանցը։ Բացվում են նոր հարյուրավոր ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ, թանգարաններ և այլն։ Աճում է գույքային ֆոնդը։ Միայն 1928 թվականին լույս է տեսնում 327 անուն գիրք, ավելի քան մեկ միլիոն ընդհանուր տիրաժով[1] Լայն տարածում է ստանում պարբերական մամուլը, 1929 թվականին լույս են տեսնում ավելի քան 20 անուն թերթեր և ժուռնալներ՝ 200 հազար տիրաժով։ 1928 թվականի փետրվարի 11-ին լույս տեսավ «Խորհրդային Հայաստան» թերթի 2000-րդ համարը, իսկ 1929 թվի հունվարին՝ Լենինականի «Բանվոր» թերթի 1000-րդ համարը։ Այդ նույն տարին «Բանվոր»-ը դարձավ օրաթերթ։

* * *

Հայ ժողովուրդը Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ, ռուս և Լադրատական մյուս ժողովուրդների օգնությամբ, փշրել էր ստրկության և ազգային ճնշման շղթաները։ Ինչպես Սովետական Միությունում ապրող բոլոր ժողովուրդները, նույնպես և հայ ժողովուրդը վերածնվել էր և դարձել սոցիալիստական ազգ։

Հանճարեղ Ստալինը 1929 թվականի մարտին գրած իր «Լենինիզմը և ազգային հարցը» անմահ երկում, խոսելով մեր երկրի հին բուրժուական ու նոր սոցիալիստական ազգերի մեջ եղած արմատական տարբերության մասին, գրում էր. «Սովետական Միության այժմյան սոցիալիստական ազգերը—ռուսական, ուկրաինական, բելոռուսական, թաթարական, բաշկիրական, ուզբեկական, ղազախական, ադրբեջանական, վրացական, հայկական և մյուս ազգերը,— արմատապես տարբերվում են հին Ռուսաստանի համապատասխան հին, բուրժուական ազգերից ինչպես իրենց դասակարգային կազմով և հոգևոր կերպարանքով, այնպես էլ իրենց սոցիալ-քաղաքական շահերով ու ձգտումներով»։[2]

Բոլշևիկների պարտիան, հենվելով Լենինի—Ստալինի ուսմունքի վրա, հետևողականորեն կենսագործում էր ազգային հարցի պրոլետարական լուծումը։ Մեր երկրի բոլոր ժողովուրդների ու ազգերի իրավահավասարությունը ստեղծեց ժողովուրդների մեծ բարեկամություն, որը հանդիսացավ սոցիալիզմի կառուցման ուժի և հզորության աղբյուրը։ «Ազգային ճնշման ոչնչացումը,— ասում է ընկեր Ստալինը,— «Լենինիզմը և ազգային հարցը» հոչա-

[1] Соц. строительство Арм. ССР, стр. 118—120.
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 386։

կավոր աշխատության մեջ,— հասցրեց մեր Երկրի առաջներում ճնշված ազգերի ազգային վերածնությանը, նրանց ազգային կուլտուրայի աճմանը, մեր երկրի ժողովուրդների բարեկամական ինտերնացիոնալ կապերի ամրացմանը և սոցիալիստական շինարարության գործում նրանց համագործակցության բարելավմանը»։[1]

Այդ նույն աշխատության մեջ ընկեր Ստալինը նշում էր. «... Պարտիան անհրաժեշտ համարեց օգնել մեր երկրի վերածնված ազգերին՝ ամբողջ հասակով ոտքի կանգնելու, աշխուժացնելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան, ծավալելու դպրոցները, թատրոնները և կուլտուրական մյուս հիմնարկները մայրենի լեզվով...»։[2]

Այսպիսով, Լենինի—Ստալինի մեծ պարտիան, ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ու նրա հետագա էլ ավելի բուռն զարգացման համար անսահման հնարավորություններ ստեղծեցին։

1929 թվականի դեկտեմբերի 21-ին, հայ ժողովուրդը Սովետական Միության բոլոր ժողովուրդների, երկրագնդի միլիոնավոր աշխատավորների հետ միասին անսահման սիրով և ամենախոր հարգանքի զգացմունքով տոնեց բոլոր աշխատավորների առաջնորդ, մեծ Ստալինի ծննդյան 50-ամյակը։

Առաջնորդի աննկուն աշխատանքի շնորհիվ Սովետական Միության բոլոր ժողովուրդները հաստատուն կերպով բռնեցին երջանիկ կյանքի ուղին։ Ստեղծել էին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը, որը հանդիսացավ մեր պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի տրիումֆը։ Անսահման մեծ է առաջնորդի ծառայությունը յուրաքանչյուր սովետական ռեսպուբլիկայի կազմավորման, ամրապնդման և բարգավաճման գործում։

Ընկեր Ստալինը բոլշևիկյան պարտիային, բանվոր դասակարգին ցույց տվեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման անսպառ հնարավորությունները։

Սովետական ժողովուրդը, ամբողջ երկրագնդի աշխատավորները մեծագույն հուզմունքով կարդացին 1929 թվի դեկտեմբերին գրված ստալինյան ոգեշունչ խոսքերը. «Կարող եք չկասկածել, ընկերնե՛ր, որ ես պատրաստ եմ այսուհետև էլ իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակությունները և, եթե հարկ լինի, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ, տալ բանվոր դասակարգի գործին, պրոլետարական ռևոլյուցիայի և համաշխարհային կոմունիզմի գործին»։[3]

Ստալինի այս խոսքերը խորը կերպով թափանցեցին միլիոնավոր մարդկանց գիտակցության և սրտերի մեջ։ Սոցիալիզմի հաղթանակների կազմակերպիչ հանճարեղ Ստալինի առաջնորդությամբ մեր երկիրը 1930 թվից թևակոխեց սոցիալիզմի կառուցման հաղթանակի մի նոր շրջանը՝ համատարած կոլխոզային շինարարության ժամանակաշրջանը։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 11, էջ 401։
2 Նույն տեղում, էջ 401—402։
3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 157։

Советская Армения в борьбе за социалистическую индустриализацию страны

(1926—1929 г. г.)

Резюме

Наша страна с успехом завершила период социалистической индустриализации. Вопрос индустриализации диктовался как внешними, так и внутренними условиями. В деле построения социализма огромное значение имело уничтожение в кратчайший срок технической и экономической отсталости СССР. Перед страной стояла задача догнать и перегнать передовые капиталистические страны путем развития могучей индустрии, в особенности машиностроения.

Партия Ленина—Сталина, разгромив противодействия троцкистско-зиновьевской банды, развернула социалистическую индустриализацию по всей стране. Социалистическая индустриализация быстрыми темпами развивалась также в национальных республиках. Если в народное хозяйство Армении в 1921—1925 г. г. было вложено 19 млн. рублей, то в 1926—1928 г. г. сумма вложений достигла 54,3 млн. рублей.

Основная часть вложений падала на следующие отрасли промышленности—энергетическую, химическую, строительных материалов и текстильную, которые были основаны в Армении лишь в эти годы.

Более быстрыми темпами развивалась электрификация; вложения в этой отрасли в 1926—1928 годах увеличились в 10 раз, по сравнению с восстановительным периодом народного хозяйства.

В 1929 году количество добытой энергии в 4 раза превысило довоенный уровень. На базе электрификации в Армении быстрыми темпами развилась горно-металлургическая промышленность.

Товарищ Сталин научно обосновал пятилетний план развития народного хозяйства СССР. В плане первой пятилетки полностью отразилась мудрая политика Ленина и Сталина по национальному вопросу. Особое внимание было уделено индустрии национальных республик СССР, а также вопросам социалистического сельского хозяйства и культурного строительства. В апреле 1929 г. собрался 6 съезд Советов Армении, на котором обсуждался и был утвержден план развития народного хозяйства.

Пятилетний план был подготовлен тем огромным трудовым подъемом, который начался в промышленности и в деревне.

Большевистская партия под руководством товарища Сталина была вдохновителем и организатором коммунистического трудового метода—социалистического соревнования.

Социалистическое соревнование особо широко развернулось в промышленности республики и в колхозной деревне. Уже с первого года были очевидны успехи социалистического соревнования.

Производительность индустрии в Армении в 1929 году увеличилась на 33%.

Быстрыми темпами развилась социалистическая индустрия; сельское хозяйство развивалось более медленными темпами, вследствие разрозненности крестьянских хозяйств и преимущества частной собственности единоличников. Основной путь развития сельского хозяйства состоял «в переходе мелких и распыленных крестьянских хозяйств в крупные и объединенные хозяйства на основе общественной обработки земли, в переходе на коллективную обработку земли на базе новой, высшей техники».[1]

Партия проводила сталинский план колхозного строительства. Социалистическая перестройка деревни встретила серьезные трудности. Острый характер приняла классовая борьба. Выражая интересы кулачества и капиталистических элементов города бухаринско-рыковская группа выступила против линии партии.

Большевистская партия разгромила противодействия правых капитулянтов и обеспечила победу колхозного строя.

Как в Советском Союзе, так и в Советской Армении колхозное движение начало развертываться с 1929 г. в Армении сотни и тысячи трудовых семейств входили в колхозы; этим они навсегда освобождались от эксплоатации со стороны кулачества, нужды и нищеты, убеждались, что колхозный путь есть единственный путь культурной, счастливой жизни. 1929 год как в социалистической индустриализации, так и в социалистическом переустройстве деревни явился годом великого перелома.

Год великого перелома для всех народов СССР, в том числе и для армянского народа, в истории определяется как год победы социалистического строительства, год подъема народного хозяйства, улучшения материального и культурного уровня трудящихся.

Армянский народ под руководством партии Ленина—Сталина и с помощью великого русского народа разорвал цепи рабства и национального гнета. Вместе со всеми народами Советского Союза армянский народ возродился и стал социалистической нацией. Равноправие всех народов Советского Союза создало нерушимую дружбу, которая является одной из движущих сил социалистического общества.

«...уничтожение национального гнета привело к национальному возрождению ранее угнетенных наций нашей страны, к росту их национальной культуры, к укреплению дружеских интернациональных связей между народами нашей страны и налаживанию сотрудничества между ними в деле социалистического строительства».[1]

---

[1] И. В. Сталин, Сочинения, т. 10, стр. 305.
[2] И. В. Сталин, Сочинения, т. 11, стр. 353.